Գարուն, 2004թ.

ՏԱՍՆԱՄՅԱ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՄՈՒՏՔԸ ԵՐՐՈՐԴ ԱՇԽԱՐՀ[1]

Ալեք Ռասիզադե[2]
(Alec Rasizade)

Նախաբան

Բաքու հաճախակի այցելող ճանապարհորդների աչքին անմիջապես զարնում է այն խոր դառնությունն ու աճող կորստի զգացողությունը, որ քաղաքացիների մեծ մասն ունի վատթարացող կյանքի հանդեպ: Անկախության կարճատև ցնծությանը փոխարինելու եկավ այն բանի գիտակցությունը, որ, այսպես կոչված, անցումային շրջանը շատերի կյանքից երկար կտևի: Խաղաղության, անկախության և բարգավաճման խոստումները, որ թվում էր, թե պետք է հաջորդեին կոմունիստական շրջանին, տասը տարվա ընթացքում հօդս ցնդեցին:

ԽՍՀՄ փլուզումից հետո Ադրբեջանն անկում ապրեց և հայտնվեց երրորդ աշխարհի երկրների շարքում: Կապիտալիզմը հաղթեց, և իշխանության ու հարստության համար մղվող դասային պայքարը, որպես պատմության անիվը պտտող հիմնական ուժ, արժեզրկվեց: Ժողովրդի համատարած վրդովմունքի հիմնական պատճառն այն է, որ բարեփոխումների սկսվելուց ի վեր, առաջընթացի փոխարեն երկիրն ավելի խորն է անդունդը գլորվել: Ահա թե ինչի հանգեցրեց Ադրբեջանի անկախության առաջին տասնամյակը:

Ադրբեջանական կապիտալիզմի սոցիալական դաժանությունը

Մեր ակադեմիական և մտավոր շրջանակները մտահոգված են ռազմավարական և էներգետիկ վեհ խնդիրներով, մինչդեռ կան կոմունիզմի ավարտը խորհրդանշող պա-

---

[1] Բնօրինակը՝ Alec Rasizade, Azerbaijan Descending into the Third World After a Decade of Independence, Journal of Third World Studies, Spring 2004, Vol. 21, Iss. 1; pg. 191, 29 pgs.

[2] Ալեք Ռասիզադեն ազգությամբ ադրբեջանցի (ծնվել ու մինչև վերջերս բնակվել է Ադրբեջանում) պատմական գիտությունների դոկտոր է, Կովկասի և Կենտրոնական Ասիայի վերաբերյալ ունի մի շարք հրապարակումներ և այդ թեմաներով էլ դասավանդում է ԱՄՆ և այլ երկրների բուհերում (Մ.Ե.):

կաս աչքի զարնող հետևանքներ՝ անուշադրության մատնված հասարակ, ոչ նավթային հոգսերով ապրող, անտեսված ամբոխները: Այն ժամանակ, երբ միջազգային ֆինանսական հաստատություններն իրենց ուշադրությունը սևեռել են մակրոտնտեսական բնագավառում կատարվելիք բարեփոխումների վրա, Ադրբեջանի բնակիչներն ավելի շատ մտահոգված են աշխատանքը պահպանելու և աշխատավարձ ստանալու հոգսերով, ինչը նրանց թույլ կտա շարժվել հետզհետե թանկացող կյանքին համընթաց:

Ադրբեջանցիների մեծ մասը ծայրահեղ չքավոր է, քանի որ ամբողջ ազգը վարակված է կաշառակերությամբ՝ սկսած երթևեկության կարգուկանոնը պահպանելու կոչված ոստիկաններից (որոնք կաշառք են պահանջում երկիրը կողոպտողի համբավ ունեցող նախագահի ազգականների համար), մինչև բարձրաստիճան պաշտոնյաները, որոնք իրենց համար շատրվաններով պալատներ են կառուցել, սակայն ձևացնում են, թե ապրում են քաղաքացիական ծառայության համար ստացած չնչին ռոճիկներով: Պատմության համընդհանուր շարժիչ ուժը հանդիսացող ժողովրդական դժգոհությունները սովորաբաբար անուշադրության են մատնվում արտաքին քաղաքականությունը ծրագրող «փորձագետների» կողմից, քանի դեռ մեկ այլ հեղաշրջում չի ստիպի նրանց մտածել այդ մասին:

«Ո՞վ կորցրեց Ադրբեջանը»: Թերևս Ադրբեջանում տիրող չքավորության ամենաակնառու օրինակին կարելի է հանդիպել այնպիսի վայրում, ինչպիսին է Բաքվի կենտրոնում գտնվող երկաթուղային կայարանի հակառակ կողմում գոյություն ունեցող Զաֆար Զաբառլիի անվան հրապարակը: Այն, ադրբեջանական այլ քաղաքների նույնանման վայրերի պես, վերածվել է մի մեծ, խառնիճաղանջ շուկայի: Այստեղ տնային հնոտի, հին գրքեր և ձայնագրիչներ, պլաստմասսե սանդալներ ու այլ՝ ցածրարժեք իրեր վաճառող մարդիկ կրթություն չունեցող ստորին խավի ներկայացուցիչները չեն, այլ նոր թշվառացած միջին խավը ներկայացնողները՝ ինժեներներ, ուսուցիչներ, իրավաբաններ, գրողներ, երաժիշտներ, նկարիչներ, ակադեմիկոսներ, պատերազմի վետերաններ և «սպիտակ օձիքավոր» թոշակառուներ: Նրանցից ոմանք աշխատանք չունեն և մի քանի հավելյալ դոլար են վաստակում՝ ազատ շուկայական բարեփոխումների արդյունքում արժեզրկված իրենց աշխատավարձին և թոշակին ավելացնելու համար: Ղարաբաղյան պատերազմի մի վետերան, որն ամսական մոտ $25-ին համարժեք թոշակ է ստանում, ասաց, թե յոթ անձից բաղկացած ընտանիք է պահում: Մեկ ուրիշը՝ ալեհեր մի ակադեմիկոս, որն աշխատում է Գիտությունների ազգային ակադեմիայում և վաստակում է $50, նախագահ Ալիևի հասցեին գովեստի ծեծված խոսքեր ուղղեց, նայելով բետոնե

պատվանդանին կանգնեցված վերջինիս լուսապսակ պատկերին: Միակ բանը, որ վերելք ապրեց Ալիևի նախագահության օրոք, սոցիալական և տնտեսական կարիքի մեջ շնչահեղձ լինող հասարակության խեղճությունն է: Մինչդեռ խորհրդային կարգերի օրոք ապահով էին բուժօգնության, կրթության բնագավառները, բնակարանային, սանիտարահիգիենիկ պայմանները, մարդիկ ապահովված էին աշխատատեղերով, առկա էր 80% միջին խավ:

Այսօր մայրաքաղաքի գերբնակեցված արվարձաններում, որոնք Ղարաբաղի հայկական բռնազավթման և տնտեսական աղետի հետևանքով տեղահանված բնակչության գրեթե կեսի համար բնակատեղի են դարձել, կարելի է տեսնել փոքրիկ երեխաների, որոնք, մագլցելով թափոնների ու աղբակույտերի վրա, ուտելիք կամ փոխանակման համար պիտանի որևիցե իր են փնտրում: Մուրացկանությունը սովորական երևույթ է դարձել, փողոցներում կարելի է տեսնել ողորմություն խնդրող տղա երեխաների, նորածիններին կրծքներին սեղմած մայրերի, սևազգեստ այրիների և անատամ ծերունիների:

Բայց գոյություն ունի նաև հին՝ խորհրդային ժամանակների համար անգամ աներևակայելի, աչքի զարնող մեկ այլ Ադրբեջան:

Ափամերձ զբոսայգիներում թանկագին, թափքը բաց մեքենաներով շրջում են անթերի հագուկապ ունեցող տղամարդիկ ու կանայք, որոնք կատարած գնումների համար վճարում են դոլարների կապոցներով: Քաղաքի գործարար մասում դրամով կարելի է գնել գրեթե ամեն ճոխություն: Առևտրականներն առաջարկում *են «Armani»* կոստյումներ, *«Escada»* բլուզներ, *«L'Oreal»* օծանելիք, $2.500 արժողության, ամերիկյան արտադրության *«Sony»* թվային հեռուստացույցներ, երկդոնանի սառնարաններ: Բաքվի փթթող ավտոշուկայի ցուցասրահները բերնեբերան լեցուն են ճոխ մեքենաներով:

Եռանդուն վաճառողները $72.000-ով առաջարկում են գործարանային պիտակով նոր, շողշողուն *Mercedes-Benz*-եր, ինչպես նաև *BMW*-ներ և *Jaguar*-ներ: «Նոր ադրբեջանցիները» (այսպես են անվանում նոր հարուստներին) հազվադեպ են հարցազրույց տալիս, ուստիև մնում է խորհել, թե որտեղից են նրանց փողերը: Սակայն առավել պակաս արտոնություններ ունեցող անձինք ազատ են արտահայտելու իրենց տեսակետները: Նրանք ասում են, թե «անցումային» կապիտալիզմն անսահման հնարավորություններ է ստեղծել ստվերային շուկայի զարգացման համար, որը շատ արագ մոնոպոլիզացվել է այն մարդկանց կողմից, ովքեր կապեր ունեն երկրի ամենաուժեղ ընտանիքի հետ: Ամենաշահութաբերը նավթի մաքսանենգությունն է, որի արդյունքում միլիոնավոր դոլարների եկամուտ բերող նավթը լցանավերով *(տանկեր – Մ. Ե.)* տեղափոխվում է

Վրաստան, Թուրքիա, Ուկրաինա, Ռուսաստան և նույնիսկ Հայաստան՝ շրջանցելով նավթի հիմնական առևտուրը վերահսկող ադրբեջանական մարմիններին:

«Նոր ադրբեջանցիներին» ուսումնասիրելու լավագույն դիտակետը գլխավոր փողոցները զարդարող ճոխ ռեստորաններն են: Այնտեղ՝ մարմարե շատրվանների շքեղության և բյուրեղյա մաքրության լողավազանների հարևանությամբ, կարելի է ճաշ պատվիրել եվրոպացի և կովկասցի խոհարարների առաջարկած հարուստ կերակրացանկից և հանգստանալ ու երաժշտություն վայելել: Կեսգիշերին մոտ նրանք վերադառնում եմ երկաթե դարպասների ետևում ծվարած իրենց վիլլաները, որոնք գտնվում են *AK-47*-ով զինված անձանց հսկողության ներքո:

Նման վայրերում կողմնակի անձինք անմիջապես հասկանում են, որ Ադրբեջանը վայրի և պայթյունավտանգ սոցիալական անհավասարության երկիր է: Ութ միլիոնանոց բնակչության միայն մի քանի սակավարտոնյալներ կարող են օգտվել ամենաճոխ հաճույքներից: Սովորաբար, «նոր ադրբեջանցիները» սառն անտարբերությամբ են վերաբերվում ուրիշների տառապանքներին: Մինչդեռ բնակչության բացարձակ մեծամասնությունը կապիտալիզմի առաջին տասնամյակում ծայրահեղ չքավորության է մատնվել:

Սարսափի մթնոլորտում բարձրաստիճան պաշտոնյաների՝ իրենց համար ստեղծված արտոնյալ այս իրավիճակն իր արտահայտությունն է գտել Բոբ Ֆոսեյի 1972թ. նկարահանված «Կաբարե» ֆիլմում, ուր պատկերված է 1920թ. Բեռլինի անկումը, որն ուղեկցվում էր հիտլերյան նացիոնալ-սոցիալիզմի վերելքով: Բաքվում տիրող անկումային դրությունը հիմնականում մնում է տեսադաշտից դուրս՝ «նոր ադրբեջանցիների» վիլլաների և դղյակների ստվերում: Այնուամենայնիվ, Բաքվում մի քանի շաբաթ անցկացրած յուրաքանչյուր մարդու համար ակնառու է պրն Ալիևի վերնախավի և հասարակ ադրբեջանցու ապրելակերպի հակադրությունը, որը Ադրբեջանը բնորոշող հիմնական հատկանիշն է՝ չհաշված Կասպյան կասկածելի նավթային պաշարների և ռազմավարական նավթամուղների վերաբերյալ արևմտյան ԶԼՄ-ների մեկնաբանությունները: Առավել մտահոգիչ է այն, որ կառավարությունն ի վիճակի չէ ապահովել հասարակական ծառայությունների և սոցիալական բարեկեցության նվազագույն պահանջները, առավել ևս այն արտոնությունները, որոնք հասարակությունն ուներ նախքան անկախություն ձեռք բերելը: Պետական կրթական համակարգը փլուզվել է, առողջապահությունը՝ վատթարացել, խղճուկ կենսաթոշակներն այդպես էլ չեն վճարվել և կործանվել է քիչ թե շատ սոցիալական հավասարություն ապահովող համակարգը: Անկումը խորհրդանշող ամենահիմնական նշաններից մեկն այն է, որ սննդի համար ծախսվող գումարը

գերազանցում է ընտանիքի եկամտի 70%-ը, այն դեպքում, երբ 1991թ. այն չէր գերազանցում այդ եկամտի 30%-ը [1]:

Որքան էլ զավեշտալի է, «էներգիայով հարուստ» Ադրբեջանը էներգիայի զգալի պակաս ունի, ինչը չի շրջանցում տները, դպրոցները, հիվանդանոցները և արտադրամասերը: Ջրի մատակարարումը խստորեն սահմանափակված է: Ադրբեջանի քաղաքների միայն 10%-ն ունի կեղտաջրերի հեռացման համակարգ: Անորակ սնունդն ու առողջապահության անմխիթար վիճակը խաթարել են ժողովրդի առողջությունը՝ երևան հանելով այնպիսի վարակներ, որոնք վաղուց մոռացված էին խորհրդային շրջանում:

Նախքան անկախանալը Ադրբեջանն իրավացիորեն հպարտանում էր իր կրթական արդյունավետ համակարգով. չափահասների մոտ 90%-ը առնվազն ուներ միջնակարգ, 30%-ից ավելին՝ բարձրագույն կրթություն: Այսօր ոչ պաշտոնական տվյալներով՝ դպրոցական տարիքի երեխաների մոտ 1/3-ը դպրոց չի հաճախում՝ օգնելով ծնողներին ապրուստի միջոցներ վաստակել: Հաշվի առնելով կառավարության՝ կրթական ոլորտում կատարած նվազագույն ներդրումները, գործազրկությունն ու կաշառակերությունը, ուսուցիչների աղքատիկ աշխատավարձը, խարխուլ ու չջեռուցվող դպրոցները, կարելի է եզրակացնել, որ կրթական համակարգն ամբողջովին փլուզվել է:

Եթե, ինչպես ՄԱԿ-ի զարգացման ծրագիրն (UNDP) է առաջարկում՝ կրթությունը, վերապատրաստումն ու տեղեկատվական տեխնոլոգիաները առաջընթացի գրավականն են, ապա Ադրբեջանի հեռանկարներն այդ առումով անմխիթար են: Բարձրագույն կրթական համակարգը նույնպես քաոսային վիճակում է՝ մոտ 150 չվերահսկվող մասնավոր ուսումնական հաստատություններով: Հովանավորչության և կաշառակերության այս մթնոլորտում միայն կապեր ունեցող անձինք, արևմտյան պետությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի միջոցով, կարող են ընդունվել և սովորել արտասահմանյան հեղինակավոր բարձրագույն կրթական հաստատություններում: Ադրբեջանի համալսարաններում ուսուցման որակը, ուսանողների հաճախումները և ուսումնական ծրագրերը չափազանց ցածր մակարդակի են և հնացած: Ադրբեջանի անկախության տասնմեկերորդ տարեդարձի կապակցությամբ ունեցած ելույթում նախագահ Ալիևը նշել է Ադրբեջանի տնտեսությունում առկա ձեռքբերումները՝ փաստելով, որ համախառն ներքին արդյունքը *(ՀՆԱ, անգլ.՝ Gross domestic product-GDP- Մ. Ե.)* վերջին 6 տարիների ընթացում աճել է 68%-ով [2]:

Անշուշտ, Ադրբեջանի անկախանալուց ի վեր նրա տնտեսությունն այնպես էր քայքայվել, որ նույնիսկ տնտեսական չնչին վերելքը կարող է ապահովել ՀՆԱ նկատելի

աճ: Այնուամենայնիվ, Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ-EBRD) վերջերս տպագրված հաշվարկների համաձայն, Ադրբեջանի ՀՆԱ-ն 2001թ. կազմել է Ադրբեջանական ԽՍՀ 1991թ. ՀՆԱ միայն 44%-ը [3]:

Ըստ Համաշխարհային բանկի (ՀԲ-WB) գնահատականի, Ադրբեջանի բնակչության 78%-ն ապրում է օրական $1-ով, իսկ մեկ շնչին ընկնող տարեկան միջին եկամուտը («նոր ադրբեջանցիները» ներառյալ) 2000թ. կազմում էր $618 կամ օրական $1.7 [4]:

ՄԱԿ-ի զարգացման ծրագրի հաշվետվությունում նշվում է, թե Ադրբեջանի քաղաքացիների մոտ 80%-ը չքավոր է՝ Եվրոպայի ամենացածր ցուցանիշներից մեկը, ավելի ցածր, քան Բոսնիայում, Ալբանիայում ու Հայաստանում: Վիճակն ավելի վատ է միայն Վրաստանում և Մոլդովայում, և սա այն դեպքում, երբ խանութները, խոստացված նավթային բումի ակնկալիքով, լեփլեցուն են ազատ շուկայի բարիքներով [5]:

Ադրբեջանն ավելի մեծ տնտեսական աղետ է ապրում, քան ԱՄՆ-ը Մեծ ճգնաժամի ամենավատթար տարիներին: Ասվածի օրինակ կարող է ծառայել Ադրբեջանի երկրորդ մեծ քաղաքը՝ Գյանջան, որտեղ 300 հազար բնակչությունից միայն 18 հազարը պաշտոնապես աշխատանք ունեն [6]:

Ամսական նվազագույն աշխատավարձն Ադրբեջանում 27 500 մանաթ է ($5.5): Եթե մեկին հաջողվում է աշխատանք գտնել, ապա աշխատավարձը կազմում է ամսական 100 հազար մանաթ ($20): Ամսական միջին աշխատավարձը 250 հազար մանաթ է ($50), ուսուցիչների աշխատավարձը կազմում է 220 հազար մանաթ ($44): Համեմատության համար նշենք, որ շահույթ չհետապնդող արտասահմանյան կազմակերպություններում վարչական աշխատանք կատարող անձինք վաստակում են մոտ $100, իսկ նրանք, ովքեր աշխատում են շահույթ հետապնդող կազմակերպություններում, ավելի շատ են վաստակում: Միջին ամսական թոշակը կազմում է 73 հազար մանաթ ($15, Ռուսաստանում՝ $45) [7]:

Աշխատավարձի չափերի այս տարբերությունը մտահոգիչ է: Նոր տիպի ռեստորաններում պիցան արժե 10 հազար մանաթ, ձկնեղենից կամ մսից պատրաստված նախուտեստը՝ 15-20 հազար, մի գավաթ գարեջուրը՝ տեղական, թե արտասահմանյան, 1000 մանաթ: Մարդկանց մեծ մասն ավտոմեքենա չունի: Նրանք հնարավորություն ունեն օգտվելու միայն էժանագին ավտոբուսներից (որոնք փոխարինում են սովորական քաղաքային ավտոբուսներին): Դրանց ուղեվարձը 1000 մանաթ է՝ մեկ ուղղությամբ, որը համարժեք է ընտանիքի հանապազօրյա մեկ հացի բոքոնի գնին: Նրանք կարող են սնունդ գնել միայն գյուղացիներից, ֆերմերային շուկաներից կամ փողոցային առևտրով

զբաղվողներից, բայց ոչ երբեք հարուստ սննդի տեսականի ունեցող նոր սուպերմարքեթներից:

Ո՞ւր կորան նավթի արտահանման եկամուտները: Միջազգային վերահսկիչ խմբերը, ինչպես նաև ընդդիմադիր մամուլը կանոնավոր կերպով լուրեր են տարածում, թե նախագահի ընտանիքը, «կլանի» անդամները և մերձավոր շրջանակն իրենց արտասահմանյան բանկային հաշիվներում թաքցնում են նավթային միլիոնավոր դոլարներ: Այնտեղ են, և ոչ թե Բաքվում, բազմաթիվ «ստորագրվող բոնուսների», «նվերների», «հոնորարների» համար նախատեսված պահուստարանները: Դրանք հեշտացնում են բիզնես գործարքների կնքումը, ինչպես նաև բացահայտ կաշառքների ու ապօրինի վարձատրությունների ստացումը: Սակայն սովորական մարդիկ տեսնում են այդ ամենի միայն մի փոքր մասը: Բաքվի բնակիչների համար ակնառու է միայն այն, որ «նոր ադրբեջանցիները» մեծ գումարներ են ծախսում թանկարժեք հագուստների, մոլախաղերի [8], ճոխ մեքենաների և արհեստական ջրվեժներով պերճաշուք վիլլաների (այն ժամանակ, երբ շարքային բնակչի համար ջրի մատակարարումը սահմանափակված է 2-3 ժամով), ինչպես նաև արտասահմանում իրենց ժառանգների ուսման թանկ վարձերի վրա: Գերժամանակակից *Mercedes*-ը բարձրագույն հասարակական դիրքի խորհրդանիշն է: Նրանք, ովքեր վարում են այդ մեքենաները, երբեք ուշադրություն չեն դարձնում ոչ միայն հետիոտներին, այլև՝ երթևեկության կանոններին և անտարբեր ձևացող ոստիկանության աչքի առաջ իրենց մեքենաները կանգնեցնում են մայթերին՝ կտրելով վախեցած անցորդների ճանապարհը:

Սոցիալական անհավասարության և բացահայտ ապօրինությունների այս մթնոլորտը բաքվեցիները որակում են ռուսական «բեսպրեդել» (չսահմանափակված անհավասարություն, դժոխային խառնաշփոթություն) արտահայտությամբ: Ադրբեջանը պարզապես բռնապետություն չէ, այն *de facto* օլիգարխիա է (կամ, ավելի ճիշտ, պլուտոկրատիա), որտեղ հարուստները վայելում են ավտորիտար վարչակարգի պաշտպանությունը: Ակնկալվող ցասումը զարմանալիորեն մեղմ է: Միայն համակերպվածության ու տխրության մթնոլորտ է: Մարդիկ ասում են. «Ամեն ինչ սարսափելի է, տեսնես վերջն ի՞նչ է լինելու»: Զարմանալի չէ, որ Ադրբեջանի ժողովուրդը փախչում է իր հայրենիքից կամ մտովի վերանում առկա խնդիրներից՝ անկախ նավթային բումից սպասվող բարեկեցության վերաբերյալ հեքիաթներից: Ադրբեջանը նախկին խորհրդային հանրապետություններից բնակչության ամենամեծ կորուստ ունեցող երկիրն է:

1999թ. մարդահամարի տվյալներով՝ Ադրբեջանում ներկայում բնակվում է 8 միլիոն մարդ: Ռուս հետազոտող Ա.Արսենևը պնդում է, որ պաշտոնական տվյալները կեղծված են, և որ երկրի բնակչության ներկայիս թիվը չի անցնում 4 միլիոնից [9]:

Իրոք, Ադրբեջանի ղեկավարությունն արտագաղթողների թիվն այսպես կրճատելու համար ունի իր նեղ շահերը, և հենց դա էլ հասարակական դժգոհության առիթ է տալիս: 1989թ. ԽՍՀՄ մարդահամարի տվյալներով՝ Ադրբեջանում բնակվում էր մոտ 7 միլիոն մարդ: 1988-94թթ. Լեռնային Ղարաբաղի հակամարտության ժամանակ Ադրբեջանի մոտ կես միլիոնանոց հայ բնակչությունը երկրից քշվեց: 1990-ական թթ. կեսերին մոտավորապես նույնքան էլ ռուսներ, հրեաներ և այլ ազգերի ներկայացուցիչներ հեռացան երկրից: Դոկտոր Արսենևի հաշվարկների համաձայն, այլազգի բնակչության արտագաղթի հետևանքով Ադրբեջանը կորցրել է ոչ պակաս, քան 1.2 միլիոն մարդ: Ի հավելումն դրա, հետևելով 1994թ. ստորագրված «Դարի պայմանագրին», որը խոստանում էր միլիոնավոր դոլարների արտասահմանյան ներդրումներ, միլիոնավոր ադրբեջանցիներ հեռացան երկրից և բնակություն հաստատեցին հիմնականում Ռուսաստանում և Թուրքիայում: Ռուսաստանյան վիճակագրության համաձայն, ադրբեջանցիների թիվն այնտեղ հասել է 2.5 միլիոնի: Մոսկվայում և նրա մերձակայքում այժմ բնակվում է 1.5 միլիոն ադրբեջանցի, այն դեպքում, երբ 1989թ. նրանց թիվը կազմում էր 21 հազար: Ռուս գիտնականի գնահատմամբ, վերջին մի քանի տարիներին Ադրբեջանից արտագաղթողների ընդհանուր թիվը 3 միլիոնից պակաս չի եղել: Այսպիսով, նա հանգում է այն հետևության, որ հաշվի առնելով աննշան բնական աճը՝ անկախության տասնամյակի ընթացքում Ադրբեջանը մոտ կիսով չափ դատարկվել է:

Ընդդիմադիր կուսակցությունների առաջնորդները մեղադրում են կառավարությանը, որ վերջինս, կեղծելով մարդահամարի տվյալները, չի հայտնում արտագաղթած տղամարդկանց և կանանց (որոնք ավելի քիչ թիվ են կազմում և մարմնավաճառությամբ են զբաղվում Պարսից ծոցի էմիրաթներում) իրական թիվը: Մոտավորապես 20 տարեկանից սկսած՝ երիտասարդ տղաները հեռանում են երկրից: Սրա վերաբերյալ ոչ մի պաշտոնական տվյալ գոյություն չունի, քանի որ կառավարությունը հերքում է խնդրի գոյությունը: Սակայն յուրաքանչյուր ոք Ռուսաստանում, Թուրքիայում, ավելի հազվադեպ՝ Եվրոպայում կամ Ամերիկայում ունի աշխատող որևէ ազգական կամ ծանոթ: Հնարավորության դեպքում նրանք փող են ուղարկում երկիր (տարեկան մոտ $2 մլրդ, որը երկու անգամ ավել է երկրի բյուջեից) [10], սակայն չեն պատրաստվում վերադառնալ, մինչև «իրավիճակի կարգավորվելը»: Անձնական զրույցների ընթացքում

մտավորականությունը խիստ մտահոգություն է հայտնում Ադրբեջանի՝ որպես պետության, ապագայի մասին. «Գյուղերում կանայք մնացել են միայնակ, որոշ գյուղերում տղամարդ ընդհանրապես չկա» [11]:

Ե՛վ Հայաստանից, և՛ Վրաստանից մեկական միլիոն մարդ է մեկնել Ռուսաստան: Տարօրինակ է, թե ինչպես անկախանալուց հետո, իրենց նախկին գաղութատիրոջից հեռանալու փոխարեն, միլիոնավոր կովկասցիներ այժմ բռնել են Ռուսաստանի ճամփան՝ «երկու ոտքերով» քվեարկելով այն երկրի հետ տնտեսական վերինտեգրման օգտին, որին նրանց ղեկավարները մինչև օրս էլ մեղադրում են իրենց անկախության դեմ գաղտնի դավադրություններ նյութելու և սպառնալիք ներկայացնելու համար: Նրանց շարքերում կարելի է տեսնել աղքատացած և հիասթափված մտավորականների, որոնք տասը տարի առաջ հակառուսական կարգախոսներով ամբոխներ էին առաջնորդում Բաքվի կենտրոնական հրապարակներում և խռովարար ճառերով մեղադրում էին այդ նույն Ռուսաստանին, որտեղ այսօր ապաստան և ապահովություն են փնտրում:

Առավել հետաքրքիր է նրանց ախոյանների (և մեր նոր «ընկերների») ողբերգական կերպարանափոխությունը. մոսկվայամետ նախկին կոմունիստական առաջնորդներ և ամենահաս ՊԱԿ անդամներ, որոնք այժմ մեծ մասամբ «համաշխարհային տնտեսության» մեջ ներգրավված հաջողակ գործարարներ են: Նրանք ՆԱՏՕ-ից պահանջում են Անդրկովկասը ներառել իր կազմի մեջ՝ ընդդեմ «ռուսական կայսերապաշտության»՝ այն նույն կլիշեներով, որոնցով մեկ տասնամյակ առաջ դատապարտում էին «ամերիկյան կայսերապաշտությունը»:

Վերը նշված սոցիալական հիմնախնդիրները, որոնց բախվել է նավթային եկամուտների հավակնություններ ունեցող այս փոքրիկ հանրապետությունը, սառցաբեկորի միայն գագաթն են: Ցանկացած պահի այն կարող է խորտակել Կասպյան նավթային կոնցեսիան՝ հաշվի չառնելով մեր *(ի նկատի ունի ամերիկյան – Մ. Ե.)* գործարարների և քաղաքական գործիչների երկստանդարտ չափանիշները: Ըստ էության, իրական կյանքը, որն այդպես արհամարհվում է քաղաքական գործիչների կողմից, ավելի սարսափելի է, քան ցանկացած երևակայություն, ինչը մենք հասկացանք սեպտեմբերի 11-ի ողբերգությունից հետո:

Ինստիտուցիոնալացված կոռուպցիա

«Երբեք «նոր ադրբեջանցուն» չհարցնեք, թե ինչպես է ձեռք բերել իր առաջին միլիոնը»,- խորհուրդ տվեց Բաքվում, արտգործնախարարությունում աշխատող հին ըն-

կերներիցս մեկը: Տասը տարի առաջ ստեղծված քառասային վիճակը շատերին արագ հարստանալու հնարավորություններ ընձեռեց: Մի քանիսն ազնիվ ճանապարհով են հարստացել, սակայն մեծամասնությունը խաբել է ու խարդախությամբ զբաղվել, կաշառել ու թալանել է երկիրն ու մանր ներդրողներին: Այդ ժամանակաշրջանն ավարտին է մոտենում: Նախկին մի քանի պաշտոնյաներ և «գործարարներ», ովքեր լցրել էին իրենց գրպանները, այժմ կամ բանտում են, կամ գտնվում են փախուստի մեջ: Սակայն նրանցից շատերը, որոնք նախկինում հետաքննվում էին, այժմ ազատ են: Ադրբեջանական նոր այս աշխարհում հաճախ բարձրացվում է այն հարցը, թե ինչպես որոշ մարդիկ, որոնք այժմ նախարարներ են, դեսպաններ, գեներալներ, դատավորներ, կուսակցության ղեկավարներ, խորհրդարանի անդամներ և ադրբեջանական հասարակության այլ կարևոր հենասյուներ, վաստակեցին իրենց նախնական հարստությունը: Անօրինական գործարարությունը թափանցել է կառավարության բոլոր օղակները և դարձել պետության անբաժանելի մասը:

Երբ կաշառակերությունը տիրում է ղեկավարության վերին օղակներում, այն իր արտահայտությունն է գտնում հասարակության մեջ: Մարդիկ կարծում են, թե պետք է վճարեն և կաշառք ստանան, ու այս կերպ կոռուպցիան ինստիտուցիոնալացվում է: Ադրբեջանցիները շատ են սիրում ասել, թե կոռուպցիան այնքան բնորոշ է իրենց պետությանը, որ առանց դրա երկիրը պարզապես չի կարող գոյատևել: Ամերիկյան արտաքին քաղաքականությունը չի անդրադառնում այս խնդրի գոյությանն Ադրբեջանում, ուր այն թափանցել է ամեն անկյուն [12]:

Կոռուպցիայի վերաբերյալ ո՛չ ռուսական, ո՛չ արևմտյան պատկերացումները չեն համապատասխանում կլեպտոկրատիայի ադրբեջանական օրինակին: Այն քառասային սպեկուլյատիվ վիճակ չէ, ուր յուրաքանչյուր ոք կարող է կողոպտել ինչ որ ցանկանա, քանի որ այստեղ ամեն ինչ խիստ վերահսկողության տակ է գտնվում: Ինչպես ես պարզեցի Ադրբեջանում, կոռուպցիայի ինստիտուցիոնալացումը զարգանում է երկու միահյուսված համակարգերով.

- *ղեկավարների շղթայի միջոցով կաշառքների բաժանում,*
- *ավագ պաշտոնյաներին վճարելու միջոցով շահութաբեր պաշտոնների գնում:*

Օրինակ, սովորաբար մաքսատան վերահսկիչն իր ապօրինի շահույթի 70%-ը տալիս է իր վերադասին: Նրա վերադասը պահում է այդ գումարի 25%-ը և մնացածը փոխանցում հաջորդ մակարդակ, և այսպես շարունակ: Սահմանապահները տեղի մաքսանենգներից հենց տեղում կորզում են իրենց բաժինը՝ փոխարենը աչք փակելով նրանց

գործունեության վրա: Սահմանային յուրաքանչյուր անցակետի ղեկավար պետք է $7 հազարի տուրք վճարի Բաքվում նստող այն ավագ պաշտոնյային, որը նրան նշանակել է այդ պաշտոնին [13]:

Խանութպանները «պաշտպանության համար» կանոնավոր կերպով բաժին են հատկացնում տեղական ոստիկանությանը և տեսչական աշխատողներին՝ հրշեջ ծառայողներից մինչև հարկահավաքները: Նման համակարգն այլևս տեղ չի թողնում ռուսական ռճի դրամաշորթության համար, քանի որ պաշտոնյաներն իրենք են զբաղված դրանով: Նավթային հոսքի և համընդհանուր կաշառակերության վերաբերյալ իր հիանալի հոդվածում ամերիկացի լրագրող Ջ.Գոլդբերգը հասարակ ադրբեջանցիներին ընդամենը մի հարց էր տվել, թե ինչու, ի հակադրություն համընդհանուր կաշառակերության, Ադրբեջանում չկա մաֆիա: Տեղացի մի գործարար բացատրել է. «Երբ կաշառակերությունը գալիս է ղեկավարությունից, էլ մաֆիայի կարիք չի լինում. պետությունն ինքնին մաֆիա է» [14]:

Կառավարական գրեթե բոլոր պաշտոններն ունեն իրենց չգրված գինը: (Տեղացիները նաև կաշառք են տալիս Ադրբեջանում գործող միջազգային ընկերություններում բարձր աշխատավարձով աշխատանք ձեռք բերելու համար) [15]:

Որքան մեծ է պաշտոնյայի կաշառք վերցնելու հնարավորությունը, այնքան բարձր է այդ պաշտոնի գինը: Օրինապահ մարմինների պաշտոնները, ինչպես, օրինակ, ներքին գործերի նախարարությունում, դատախազությունում, դատական, հարկային և մաքսային ծառայությունների ոլորտում, ինչպես նաև համապետական ու տեղական գործադիր պաշտոնները համարվում են կաշառակերության տեսակետից բավականին նպաստավոր: Եթե մաքսային վարչության տնօրեն Կ. Հեյդարովը իբր թե վճարել է $3 մլն՝ պաշտոն ստանալու համար, ապա նա այդ քայլին դիմել է իր նախնական «ներդրումը» կանոնավոր շորթումների և կաշառքների միջոցով կրկնապատկելու կամ եռապատկելու նպատակով (ինչը մեզ վերադարձնում է վերը նշված թիվ 1 շղթայական համակարգին) [16]:

Երբ Բաքվի միջազգային օդանավակայանի ոստիկանության նախկին պետը, որի պաշտոնն իջեցրել էին, որոշեց արտասահման տեղափոխել «բարեկեցիկ կյանք ապահովելու համար» անհրաժեշտ կանխիկ գումարով լեցուն մի քանի ճամպրուկ, նա պարզապես օդանավակայանի ոստիկանության նոր պետին վճարեց $800 հազար: Մեկ այլ դեպքում ներգրավված էին օրինապահ մարմինները. մի նախկին բանկիր, որը ավանդատուների գումարներով փախել էր երկրից, Պարսից ծոցի էմիրաթներում $11 մլն-ով

կաշառեց ադրբեջանական հատուկ նշանակության ջոկատի անդամներին, որոնք եկել էին նրան ձերբակալելու: Այդ գործն ի վերջո փակվեց: Ադրբեջանական իշխանական բուրգի ամենավերին մասին (որը, համաձայն հասարակական ընդհանուր կարծիքի, այս բոլոր «տուրքերի» վերջին հանգրվանն է) առնչվող հանրահայտ մի դեպք. ըստ որոշ պնդումների, նախագահի աշխատակազմի ղեկավար Ռամիզ Մեհթիևը ստացել է $6 մլն՝ մի խումբ ձեռնարկատերերի արդարացնելու համար, որոնք մեղադրվում էին մեծ քանակությամբ բամբակի ապօրինի արտահանման մեջ:

Սակայն այս բոլոր հանցանքները խամրում են նավթային մաքսանենգության սխեմայի դիմաց, որը ազգային մասշտաբով իրականացվում է նախագահական ընտանիքի կողմից: Վերջինս իր ձեռքում է պահում արտահանման բացարձակ մենաշնորհը, ինչպես նաև նավթային արտադրանքի տեղական բաշխումը: Նախագահ Ալիևի եղբայր Ջալալ Ալիևին է պատկանում *Azpetrol* անունը կրող ազգային բենզալցակայանների կարտելը: Իլհամ Ալիևը, որին հայրը նշանակել էր Ադրբեջանի Հանրապետության նավթային պետական ընկերության (ԱՀՆՊԸ-*SOCAR*) փոխնախագահ, պետական մենաշնորհի իրավունքով հսկում է հում նավթի ամեն մի փոխադրում: Վրաստանի կառավարության վիճակագրական տվյալների համաձայն, ամեն տարի ԱՀՆՊԸ-ը Վրաստանի սևծովյան Բաթումի և Փոթի նավահանգիստներով արտահանում է 6.5 միլիոն տոննա ավելի հում նավթ, քան հայտնում են Ադրբեջանի կառավարության պաշտոնյաները: Այս չհայտարարագրված տեղափոխումների արդյունքում նախագահական կլանը տարեկան ստանում է մոտ $1 մլրդ եկամուտ [17]:

Այսպիսի ապօրինի փոխադրումների վերաբերյալ փաստերը հաստատել են Ադրբեջանում գործող ամերիկյան բոլոր նավթային ընկերությունների պաշտոնյաները անցած տարի Բաքվում տեղի ունեցած մեր առանձնազրույցների ժամանակ: Նրանք ասում էին, որ ԱՀՆՊԸ-ը երբեք անկախ աուդիտի չի ենթարկվել և որ երկրի Կենտրոնական բանկի միջոցով պետության նավթային եկամուտները կառավարելու փոխարեն, ինչը պահանջում է օրենքը, այդ եկամուտները կառավարում է 2001թ. ստեղծված բավականին անթափանց Նավթի ազգային հիմնադրամը, որը հաշվետու է միայն հանրապետության նախագահին:

Պարզ չէ, թե տեղական կաշառակերությունն ինչքանով է կապված տարածաշրջանում մեր կորպորատիվ ներդրողների աշխատանքի հետ, որը հանդիսանում է 1977թ. ընդունված «Արտաքին կոռուպցիայի դեմ ԱՄՆ գործունեության ակտի» սուբյեկտ: ՎՋԵԲ-ի վերջերս իրականացրած ուսումնասիրությունը հաստատում է այդ պնդում-

ները: Այդ ուսումնասիրության համաձայն, Ղազախստանում բիզնեսով զբաղվող արտասահմանյան ընկերությունների 25%-ը բազմիցս ներգրավվել է կաշառակերության մեջ: Ըստ այդ ուսումնասիրության, Ադրբեջանում գործող կազմակերպությունների 80%-ը բողոքել է, որ իրենց գործն անվերջ չհետաձգելու կամ առաջ տանելու համար մեծ քանակությամբ շարունակական «մուծումներ» և անօրինական ծախսեր են կատարել: ՎԶԵԲ ուսումնասիրության արդյունքում հայտնի է դարձել, որ կաշառակերությունը ներառում է նաև Ադրբեջանում իրականացվող բիզնես գործարքներից ստացված անօրինական «հարկերը», որը կազմում է ընկերությունների տարեկան եկամտի 10%-ը [18]:

Երբեք չեմ լսել, որ ԱՄՆ արդարադատության նախարարությունը որևէ հետաքննություն անցկացնի Կովկասում տեղի իշխանությունների հետ անմիջական կապ ունեցող նմանատիպ գործունեության վերաբերյալ: Այդ երկրների սոցիալական և քաղաքական կառուցվածքներում այդչափ խոր արմատավորված կաշառակերությունն ու ծանոթի միջոցով պաշտոնի անցնելը մեծ խոչընդոտ են հանդիսանում Կովկասում նոր ծնունդ առնող ժողովրդավարության համար: Ժողովրդավարություն ասելով հասկանում ենք ազատ ընտրություններ: Այն չի կարող սկիզբ առնել այնպիսի երկրներում, որտեղ դժվար թե մեկը բանտ ընկնի ժողովրդին թալանելու կամ արտասահմանից եկած օգնությունը յուրացնելու համար: Կոռուպցիայի մեջ խրված կառավարությունները, անկախ նրանից, թե ինչ են ասում կամ որքանով են բարեկամաբար տրամադրված մեր նկատմամբ, միայն կարող են ժողովրդական խռովության տեղիք տալ՝ շատ հաճախ ազգայնացնելով արտասահմանյան նավթային կոնցեսիաները: Մինչդեռ արդարադատության նախարարությունը Ադրբեջանի դեպքում չի իրականացնում «Արտաքին կոռուպցիայի դեմ ԱՄՆ գործունեության ակտը», և, ինչպես հետագայում պարզվեց, ամերիկյան ներդրողներին մոլորեցրել են Կասպիցի նավթի պաշարների իրական քանակի վերաբերյալ տվյալների հարցում:

Որպես օրինակ վերցնենք *British Bank*-ի դեպքը, որը վերջերս դադարեցրեց գործունեությունն Ադրբեջանում: Անցած ձմեռ, երբ ես այցելել էի Բաքու, այդ բանկի կողմից անցկացվող պաշտոնական մամուլի ասուլիսի ժամանակ պարզ դարձավ, որ բանկը դադարեցնում է գործունեությունն Ադրբեջանում: Բանկում էին գտնվում տեղի բնակչության մոտ $50 մլն արժողության ավանդները: Այն մեծությամբ երկրորդ բանկն էր *International Bank of Azerbaijan*-ից հետո և առաջինն էր արտասահմանյան բանկերի շարքում: Ինչո՞ւ պետք է բանկը փակվեր այն ժամանակ, երբ Ադրբեջանը նավթային բում էր ապրում: Այն մեծ հաջողությամբ գործում է Հայաստանում, որտեղ ոչ մի նավթ էլ

չկա: Պարզվեց, որ *British Bank*-ը Ադրբեջանում դադարեցնում է գործունեությունը, քանի որ սննկացել է: Ըստ ոչ պաշտոնական տեղեկությունների, նախագահ Ալիևի առողջության վատթարացմանը զուգընթաց ադրբեջանցի պաշտոնյաները երկու ամսվա ընթացքում *British Bank*-ից հանեցին իրենց $50 մլն ավանդները. կապիտալի այդ միաժամանակյա դուրսգրումը սննկացրեց բանկը:

Մի քանի միջազգային ուսումնասիրություններ ցույց են տվել, որ Ադրբեջանը դարձել է աշխարհի ամենակոռումպացված երկրներից մեկը: Անցած տարի Բեռլինում գործող *Transparency International Organization*-ը և Լոնդոնում գտնվող *Control Risks Group*-ը Ադրբեջանը համարեցին աշխարհի երրորդ ամենակոռումպացված երկիրը՝ Կամերունից և Անգոլայից հետո, և առաջինը՝ նախկին խորհրդային հանրապետությունների մեջ [19]:

Առեղծված է մնում, թե ինչու նախագահ Ալիևը, որ Ադրբեջանի կոմունիստական ղեկավար լինելու ժամանակ ուներ հակակոռուպցիոն գործունեության հիանալի կենսագրություն, այսօր չի հետաքրքրվում անարդար կերպով կուտակված հարստության օրինականությամբ և իրականում ամրացնում է ազգային բուրժուազիայից և կլեպտոկրատիայից սերվող բարոն-ավազակների որջը: Սեփականաշնորհման և ազատ շուկայական բարեփոխումների հնարքներով քողարկված այսպիսի խորամանկությունները կասկածի տակ են դրել կեղծիքներից զուրկ հասարակություն և սոցիալական արդարություն հաստատելու նրա պատրաստակամությունը: Ընդդիմության առաջնորդները հաստատում են, որ նավթի արտահանումից բացի, ամենաշահութաբեր գործերը, ինչպիսիք են անշարժ գույքն ու առևտրի մենատիրությունը (խավիար, բամբակ, ծխախոտ) գտնվում են ֆինանսական մարմինների հետ սերտ կապեր ունեցող ազգականների վերահսկողության տակ, որոնք վերջիններիս թույլ են տալիս միլիոններ վաստակել՝ փոխարենը ստանալով եկամտի իրենց յուղոտ բաժինը:

Ադրբեջանի մամուլն այսօր հպարտանում է «Եվրոպայում ամենահարուստ մարդկանցով», որոնց հարստացման աղբյուրներն այս չքավոր երկրում անհասկանալի են: Մեծ չափերի մասնավոր շահույթ են ստանում այն անհատները, որոնք օգտվում են պետական նավթի արտահանման եկամուտներից և երկրի ունեցվածքի սեփականաշնորհման անօրինական շահաբաժիններից: Երկրում տիրող թալանի չափը պատկերացնելու համար պետք չէ հեռու գնալ. խորհրդարանի նախկին խոսնակ Ռասուլ Գուլիևը իբր թե իր վերահսկողության ներքո գտնվող նավթի զտման պետական գործարանից անօրինական ճանապարհով թալանել է $76 մլն, այնուհետև, 1997թ., ապահով կերպով փախել Նյու Յորք [20]:

Կառավարական մակարդակի շորթման և անպատժելիության աստիճանի մի այլ օրինակ է արտաքին գործերի նախկին նախարար Հասան Հասանովը, որը անօրինական ճանապարհով յուրացրել է արտասահմանում Ադրբեջանի դիվանագիտական առաքելությունների համար նախատեսված թուրքական $10 մլն վարկը և այդ գումարով Բաքվում կառուցել սեփական խաղատուն ու հյուրանոց: 1998թ. վարչապետ Արթուր Ռասիզադեի վերահսկողության ներքո ընթացող քրեական հետաքննությունից հետո նախարարներից մեկին պարզապես պաշտոնանկ արեցին, սակայն նա շարունակեց մնալ խորհրդարանի անդամ, և դա նախագահ Ալիևը համարեց «արժանի» պատիժ:

Տեղի կապիտալիստական միակ դասը, որն ի վիճակի է կրկին ներդրումներ կատարել ազգային տնտեսության մեջ՝ ստեղծելով նոր աշխատատեղեր, բաղկացած է կոմունիստական ղեկավարության վերապրուկներից, ամենահաս ՊԱԿ-ի անդամներից, գյուղատնտեսական և արդյունաբերական սանձարձակ ձեռնարկատերերից, որոնք յուրացրել են պետական սեփականության ամենաարդյունավետ և ամենաշահութաբեր հատվածները, որոնց բաշխումը, ըստ պաշտոնական հաղորդագրությունների, պետք է մեկնարկային հավասար պայմաններ ստեղծեր յուրաքանչյուր քաղաքացու համար: Լավ կազմակերպված հովանավորչության ընդարձակ ցանցը թույլ է տալիս նրանց խուսափել իշխանության ճնշումներից: Նրանք չեն թաքցնում, որ հարուստ են և անամոթաբար ծաղրում են ժողովրդական հավասարությունը խորհրդանշող իդեալները՝ գրգռելով տառապած ամբոխի արդարության հասնելու բնազդը: Այդ դժգոհությունը, իր հերթին, թույլ չի տալիս, որպեսզի «նոր ադրբեջանցիները» շռայլ կենսակերպից, պերճաշուք վիլլաներից և ճոխ մեքենաներից զատ՝ լուրջ ներդրումներ կատարեն երկրում:

Հեյդար Ալիև. «L'ETAT, C'EST MOI !»

Բաքվի արդեն տարեց կարևորագույն մարդը՝ Հեյդար Ալիևը, որը չկարողացավ իրականացնել, իր խոսքերով՝ «Բաքվից երկրորդ Քուվեյթ» ստեղծելու վերաբերյալ անհավանական խոստումները [21], իրականում երկիրը կառավարում էր ինչպես սեփական սինդիկատ՝ շրջապատված քծնողների և շողոքորթների հոծ բազմությամբ: Որքան երկար է քաղաքական ուժը մնում իշխանության ղեկին, այնքան ձգտում է երկարաձգել այդ ժամանակաշրջանը: Սկսած 1969թ.՝ վերջին 33 տարիների ընթացքում (ներառյալ՝ 1987-1993թթ. վեցամյա ընդմիջումը) Ալիևը եղել է Ադրբեջանի գլխավոր ղեկավարը: 1982թ., Բրեժնևի մահից հետո, խորհրդային նոր առաջնորդ Անդրոպովը Ալիևին նշանակեց Մոսկվայի պալիտբյուրոյի անդամ, 1987թ. Գորբաչովն ազատեց նրան այդ պաշ-

տոնից: Պալիտբյուրոյի որոշ հուշագիրներ նշում են, որ 1988թ. Սումգայիթում և Բաքվում տեղի ունեցած հայկական առաջին ջարդերը Կրեմլում իշխանության համար մղվող պայքարի արտացոլումն էին: Դրանք կառավարվում էին Ալիևի հին կադրերի կողմից, որոնք հույս ունեին Գորբաչովի կողմից նշանակված Ա. Ռ. Վեզիրովի փոխարեն, ով «չափից ավելի ազնիվ էր հանրապետությունում տիրող կազմակերպված հանցավորության համար», Ադրբեջանում վերականգնել Ալիևի իշխանությունը [22]:

Ինչպես Ալիևն էր ասում, նա կրկին կստանձներ երկրի իշխանությունը 2003թ., ութսուն տարեկան հասակում (մի երկրում, որտեղ կյանքի միջին տևողությունը 63 տարի է): Իր հարազատ քաղաքում՝ Նախիջևանում ունեցած ելույթի ժամանակ Ալիևն ասել է. «Ես մոտ ինը տարի եղել եմ Ադրբեջանի նախագահ, և եթե աստված կամենա, ես դեռ շատ երկար կմնամ այդ պաշտոնին» [23]:

Ե՛վ իշխանության, և՛ ընդդիմության քաղաքական մանևրները կենտրոնացած էին մեկ գլխավոր հարցի՝ Հեյդար Ալիևի ժառանգության շուրջ: Հաշվի առնելով վերջինիս տարիքն ու վատթարացող առողջությունը (1999թ. նա Քլիվլենդում ենթարկվել է սրտի վիրահատություն)՝ այնքան էլ հավանական չէր, թե նա կրկին իշխանության գլուխ կանցնի 2003թ.: Փոխարենը նրա հիմնական մտահոգությունն էր հող նախապատրաստել որդու՝ Իլհամի համար, հարց, որն արդեն յոթ տարի քննարկվում էր:

Նախագահի պաշտոնին Իլհամին ժառանգորդ նշանակելու գործընթացի օրինականացման համար նախագահ Ալիևն առաջարկեց սահմանադրության մեջ մտցնել 39 ուղղում և 2000թ. օգոստոսին այդ փոփոխությունների վերաբերյալ հանրաքվե անկացրեց: Ըստ կառավարության, այս փոփոխությունները հաստատվեցին հանրաքվեի մասնակիցների ձայների բացարձակ մեծամասնությամբ՝ 97%: Ընդդիմադիր քաղաքական գործիչներն, ընդհակառակը, պնդում էին, որ իշխանություններն ամբողջովին կեղծել են հանրաքվեի արդյունքները: Ամենակարևոր փոփոխությունն այն էր, որ նախագահի մահվան, հրաժարականի կամ անաշխատունակության դեպքում նախագահի պարտականություններն անցնում էին վարչապետին: (1995թ. սահմանադրությամբ այդպիսի իրավիճակներում նախագահի պարտականությունները ստանձնում էր խորհրդարանի խոսնակը): Նախագահական ընտրությունների առաջին փուլում հաղթելու համար թեկնածուն այսուհետ պետք է հավաքի քվեարկությանը մասնակցած ընտրողների ընդհանուր ձայների 50%-ը՝ գումարած մեկ ձայն, նախկինի երկու երրորդի փոխարեն:

Տեղի քաղաքական գործիչները միաձայն պնդում են, որ այս փոփոխությունների նպատակն էր Հեյդար Ալիևին իրավունք տալ որդուն նշանակել վարչապետի պաշտո-

նին, ինչը հետագայում նրա համար կապահովեր նախագահի աթոռը: Սահմանադրության համաձայն, միայն նախագահը կարող է նշանակել վարչապետին, որն իր քայլերի համար պատասխանատու է միայն նախագահին և ոչ թե օրենսդիր մարմնին: Իլհամ Ալիևին վարչապետ նշանակելը նրա՝ իբրև տնտեսական ղեկավարի կարողությունները ի ցույց դնելու միակ հնարավորությունն էր այն ժամանակահատվածում, երբ աճող նավթային եկամուտները կարող էին հանգեցնել երկար սպասված տնտեսական աճի: Պարզվում է, որ Ալիևները ստացել էին Վաշինգտոնի քաղաքական ուժերի լուռ համաձայնությունը. կրտսեր Ալիևը կանոնավոր կերպով ու «կախարդական» զանգեր էր կատարում այնտեղ:

Ինչպես նշել է ամերիկյան մի լրագրող, վերջին այցելության ժամանակ «նա մի ճոխ ճաշկերույթի պատվավոր հյուր էր, որին մասնակցում էին Սփենսեր Աբրահամը (*Spenser Abraham*)՝ Էներգետիկայի նախարարը, Ռիչարդ Արմիթեյջը (*Richard Armitage*)՝ փոխարտգործնախարարը, և Դիկ Չեյնին (*Dick Cheney*)՝ փոխնախագահը: Երբ ես հանդիպեցի պրն Ալիևին, նա այդ օրն ավելի վաղ արդեն ճաշել էր նախկին բարձրաստիճան պաշտոնյաների մի խմբի հետ, որի մեջ էին Մադլեն Օլբրայթը (*Madeleine Albright*)՝ նախկին արտգործնախարարը, Բրենթ Սքոուքրոֆթը (*Brent Scowcroft*)՝ ազգային անվտանգության գծով նախկին խորհրդականը» [24]:

Որոշ դիտորդներ նշում են մեկ այլ նորամուծություն, ըստ որի՝ պարտադիր չէ, որ վարչապետը Ադրբեջանի քաղաքացի լինի: Այս փոփոխության նպատակն է ռուսական նավթային հսկա Վագիթ Ալեքպերովին (ծագումով ադրբեջանցի) նշանակել Ադրբեջանի վարչապետ: Ալեքպերովը կաշխատի արդեն նախագահի պաշտոնն ստանձնած Իլհամ Ալիևի հետ՝ որպես վերջինիս հզորության գրավական: Սակայն հենց այդ նույն փոփոխությունն էլ, որն օտարերկրացի քաղաքացիներին թույլ է տալիս ստանձնել վարչապետի պաշտոնը, կարող է խնդիրներ առաջացնել: Օրինակ, եթե Հեյդար Ալիևը հանկարծ մահանա, ռուսամետ ուժերը, օգտվելով ստեղծված քաոսային վիճակից, կարող են կազմակերպել նախկին նախագահ Այազ Մութալիբովի կամ ՊԱԿ-ի նախկին նախագահ Վագիֆ Հուսեյնովի վերադարձը (նրանք երկուսն էլ Մոսկվայում անցկացրած տարիների ընթացքում ձեռք էին բերել ռուսական անձնագրեր):

Այսօր Ադրբեջանը ո՛չ ժողովրդավարական և ո՛չ էլ Կենտրոնական Ասիայի երկրների նման լիարժեք ավտորիտար պետություն է: Ադրբեջանում առկա են ակտիվ և բազմաբնույթ ընդդիմություն, համեմատաբար ազատ մամուլ, աշխույժ քաղաքական կյանք: Ընդդիմության առաջնորդներն բացահայտորեն և անողորմ քննադատում են

վարչակարգը, նրանք նույնիսկ կազմակերպում են ցույցեր և զանգվածային հանրահավաքներ: Նման երևույթի երբեք չես հանդիպի Կենտրոնական Ասիայում: Սակայն ընդդիմադիր կուսակցությունները չունեն քաղաքական բազմակողմանի հենակետ՝ ադրբեջանցիներին համատարած անտարբերությունից դուրս բերելու և աջակիցների մեծ բանակ ստեղծելու համար:

Բացի այդ, երկրի ընդդիմադիր քաղաքական ուժերը միմյանց հետ ներքին պայքարի մեջ են, ինչը նրանց թույլ չի տալիս միասնական ճնշում գործադրել կառավարության վրա: Ադրբեջանի իշխանություններն ապակողմնորոշում են ընտրողներին՝ ստեղծելով իրենց վերահսկողության տակ գտնվող այլընտրանքային նույնանուն «կուսակցություններ», որպեսզի չեզոքացնեն «իրական» ընդդիմադիր կուսակցություններին: Արդյունքում՝ Ադրբեջանում գործում են երկու «Իսլամական», երեք «Ազգային ճակատ», չորս «Ժողովրդավարական» և հինգ «Կոմունիստական» կուսակցություններ:

Խիստ անհանգստացնող են լայնորեն տարածված անտարբերությունը և համընդհանուր նողկանքը քաղաքական գործիչների նկատմամբ: Երկիրն առաջ է շարժվում՝ հետևում թողնելով կոլեկտիվացման գաղափարախոսությունը, բնակչության մեծ մասի համար կայունությունն ու գոյատևումը շատ ավելի կարևոր են դառնում, քան ժողովրդավարության և Լեռնային Ղարաբաղի ազատագրման վերացական հայեցակարգերը, որոնք անօրինությունից, պատերազմից և չքավորությունից բացի ուրիշ ոչինչ չեն տվել: Սա էր այն իրական քաղաքական եղանակը, որի միջոցով, չնայած ընդդիմության հեգնանքին, Ալիևը հույս ուներ իշխանությունը սահուն կերպով փոխանցել որդուն:

Ադրբեջանում զգալի քանակությամբ մարդիկ գտնվում են Ալիևի վարչակազմի պաշտպանության ներքո: Նրանք բոլորն էլ արտոնյալ դիրքեր են գրավում և շահագրգռված են պահպանել վարչակազմը, որպեսզի չկորցնեն անօրինական կերպով սեփականաշնորհած ունեցվածքն ու ապօրինի եկամուտները:

Դա է պատճառը, որ Իլհամն ուժեղ աջակցություն ունի պետական կառույցներում և ի դեմս «նոր ադրբեջանցիների»: Նրանք մեծ մասամբ պահպանողական են և օգտվում են *status quo*-ից: «Նոր ադրբեջանցին» երբեք իր վրա չի վերցնի բարեփոխումներ կատարելու հոգսը: Չնայած նրանց միջև առկա մրցակցությանն ու հակամարտություններին՝ նրանք ստեղծել են, ինչպես իտալացիներն են ասում, garantismo կամ համաձայնություն վարչակազմի հիմնական փայատերերի միջև՝ ինքնապահպանման կանոններին հետևելու նպատակով:

Ընդդիմությունը բուռն քննադատում է «գերդաստանային երկիր» ստեղծելու ցանկացած ծրագիր և բոլոր հնարավոր ձևերով արատավորում Իլհամին, հաճախ՝ անարդարացիորեն: Սակայն ընդդիմությունը չունի հասարակական լայն աջակցության ո՛չ տնտեսական, ո՛չ էլ քաղաքական լծակներ, որպեսզի առաջ մղի իր ծրագիրը: Նավթային եկամտի վրա հենված վարչակարգը հաշվետու չէ շարքային քաղաքացիներին. այն ստիպված չէ հավաքել նրանց չնչին հարկերը կամ լսել նրանց հոգնեցուցիչ պահանջները: Միայն պետք է նավթային դոլարների մի մասը հատկացնել զինված ուժերին՝ տգետ ամբոխին սանձելու համար, իսկ մնացած մասը կարելի է կիսել քաղաքական վերնախավի անդամների միջև: Թվում է, թե Ադրբեջանի ղեկավարությունն ավելի շատ ժամանակ է ծախսում իշխանության և անկախության արտաքին ատրիբուտների, քան լավ կառավարման պատասխանատվության վրա:

Նրանք փաստարկում են, թե ադրբեջանցիները գերադասում են ունենալ «ուժեղ մարդկանցից» կազմված վճռական ղեկավարություն: Չնայած հնարավոր է, որ այդ ղեկավարներից մի քանիսը, իրոք, հավատան, թե իրենց ձեռնարկած գործողություններն օգնում են մարդկանց, սակայն նրանք այդպիսի դատողություններ անելու համար իրականությանը համապատասխանող չափազանց քիչ տեղեկություններ ունեն: «Ապարատի» այդ բոլոր ներկայացուցիչները չափազանց երկար են ապրել կոմունիստական «նոմենկլատուրայի» մեկուսացված աշխարհում, որտեղ նրանք հազվադեպ են շփվել հասարակ քաղաքացիների հետ: Այժմ նրանք էլ ավելի անհասանելի են դարձել, քանի որ նյութական անհավասարությունը հասարակության ներսում էլ ավելի է խորացել: Եթե նույնիսկ Ադրբեջանի վերնախավը ցանկանա բարեփոխումներ անցկացնել և հաստատել ժողովրդավարություն, ապա այդ դեպքում անգամ մեծ դժվարությամբ կկարողանա ամբողջովին օտարացած ժողովրդին համոզել, թե առաջնորդվում է ազնիվ մղումներով:

Կասպիցի նավթային բումի մասին հեքիաթները

Նավթի բումի թեման անխուսափելի է Ադրբեջանի մասին խոսելիս: Մեր վերլուծաբանների ու լրագրողների՝ երկրի մասին ստերեոտիպային բանաձևը հետևյալն է՝ «Կասպից ծովի մոտ գտնվող էներգակիրներով հարուստ նախկին խորհրդային հանրապետություն»: Այն անպայմանորեն ի հայտ է գալիս Ադրբեջանին վերաբերող յուրաքանչյուր թեմայում: Այլ կարևոր խնդիրների հաշվին նրանք շարունակում են մանրակրկիտ կերպով քննարկել Կասպիցի նավթի վերաբերյալ պայմանագրերն ու դրա արտահանման համար նավթամուղների ճանապարհները՝ ուշադիր հետևելով բանակցու-

թյուններում ձեռք բերված յուրաքանչյուր չնչին առաջընթացին՝ նավթային եկամուտները և նույնիսկ նավթամուղները մակերեսորեն կապելով կովկասյան բոլոր երկրների (ինչպես, օրինակ, Վրաստանի) բարգավաճման հետ՝ միաժամանակ մեղմելով տարածաշրջանի տնտեսական ճգնաժամի բարդությունները:

Բնական հարուստ պաշարներ ունեցող երկրների նման, Ադրբեջանում նույնպես արտասահմանից միլիարդավոր դոլարների ներդրման հավանականությունը մեծացրեց ադրբեջանցիների համընդհանուր ակնկալիքները: Սակայն, մեղմ ասած, հսկայական նավթային և գազային ծրագրերը դեռ իրենց «սկզբնական փուլում են», և պարզ չէ ո՛չ նրանց իրական քանակը, ո՛չ էլ տնտեսական իրագործելիության հնարավորությունը: Փոխարենը, հետխորհրդային առաջին տասնամյակը բնորոշվել է կաշառակերության աճով և կյանքի պայմանների կտրուկ վատացմամբ, որոնք ժամանակին պահպանվում էին սոցիալիստական բարօրության համընդհանուր համակարգով:

Աճող աղքատության հետևանքով հասարակությունն ավելի ակտիվ է արձագանքում իսլամական արմատականության կոչերին: Առնվազն ծիծաղելի է, երբ ադրբեջանական ղեկավարները Վաշինգտոնի մարտավարական խրախուսանքները ներկայացնում են որպես այն բանի ապացույց, թե իրենց պաշտոնները կպաշտպանվեն թե՛ ներքին խռովություններից, թե՛ արտաքին հարձակումներից: Նավթային ոսկու հանքերով գայթակղվելը և բացահայտորեն անսկզբունքային այն ղեկավարներին աջակցելը, որոնք ընդամենը մեկ տասնամյակ առաջ ամերիկյան քաղաքականության կրքոտ կոմունիստ թշնամիներն էին, միաժամանակ սոցիալական բարօրության կորստից փոթորկվող և աղքատության մեջ թավալվող երկրի կարիքներն արհամարհելը, չնայած վերջինիս կասկածելի էներգետիկական հարստությանը, ԱՄՆ կառավարության համար խիստ մոլորեցնող քաղաքականություն է: Մենք ռիսկի ենք դիմում՝ փորձելով գործ ունենալ դավաճան Ադրբեջանի հետ: Արդյոք վերջինս կընտրի՞ նավթային արդյունաբերության ազգայնացման Իրանի, Իրաքի, Սիրիայի, Ալժիրի, Վենեսուելայի և երրորդ աշխարհի հուսալքված ու թշվառ այլ երկրների ձեռնարկած միջոցները:

Աղքատ Ադրբեջանը բացառություն չի կազմում ընդհանուր կանոններից: Այնուամենայնիվ, տարածաշրջանում մեր մեծ նավթային քաղաքականությանը մարտահրավեր նետող մոտեցումները չեն քաջալերվում, և ուրիշների գործերի մեջ քթները խոթող ճշմարտասերները, որոնք հայտնի են փաստեր հայտնաբերելու ջանասիրությամբ, նույնիսկ վտանգում են իրենց կյանքը: Մի քանի թերահավատ հետազոտողներ, ովքեր 1990-ական թթ. կեսերին փորձել էին գուշակել Կասպիցի նավթային պաշարների չափը,

անձնապաշտությունն ու իշխող կլեպտոկրատիան, կոռուպցիայի ինստիտուցիոնալացումն ու համընդհանուր չքավորությունը, անարձագանք մնացին թե՛ արտաքին քաղաքականությունը լուսաբանող մամուլում, թե՛ Վաշինգտոնում: Եթե նույնիսկ որոշ գիտնականներ մյուսներից առանձնանում էին կանխատեսման ավելի մեծ ընդունակությամբ, նրանց գաղափարները ենթարկվում էին բյուրոկրատական հատուկ մշակման: Հաշվի էր առնվում միայն հզոր նավթային լոբբիի միջով անցնող համընդհանուր կարծիքը. սա էր այն, ինչ հասնում էր նախագահին *(ԱՄՆ նախագահին- Մ. Ե.)* ու Կոնգրեսին:

Նավթային մեծ հարստությունների կանխատեսումների վրա հիմնված Ամերիկայի տասնամյա մեղրամիսը Ադրբեջանի հետ ավարտվեց, երբ սենսացիաներ սիրող մամուլի կողմից ստեղծված ածխաջրածնային ծիածանափայլ պղպջակները պայթեցին խառնաշփոթության մթնոլորտում: Քաղաքական նպատակներով ուռճացված կասպյան նավթի 200 միլիարդ բարելի փոխարեն, որը գնահատվել էր $4 տրիլիոն և շատ գունեղ ներկայացվել պետական քարտուղարության կողմից՝ տարածաշրջանում ամերիկյան ներդրողներին գրավելու և իր ռազմավարությունն արդարացնելու նպատակով [25], այսօր, հենվելով ԱՄՆ էներգետիկայի նախարարության տեղեկատվական բաժնի կատարած հաշվարկների վրա, մենք կարող ենք խոսել լոկ 18-34 միլիարդ բարել նավթի հավանական գոյության մասին, որից 14 միլիարդը գտնվում է ծովի *(Կասպից ծովի - Մ.Ե.)* ղազախական հատվածում [26]:

Դժվար գտնվի արդյունաբերական մի որևէ ճյուղ, որն ունենա գովազդի այնպիսի բացառիկ մեխանիզմ, ինչպիսին Կասպիցի նավթինն է: Ահա Newsweek ամսագրից իրականությանը չհամապատասխանող ծեծված գովազդի մի թարմ օրինակ. «Անշուշտ, լրագրողին բնորոշ զսպվածությանը սազական չէ Կասպիցի նավթի մասին խոսել որպես չափազանց հետաքրքիր հետախուզական թրիլլեր… Ամենահամեստ հաշվարկներով, Կասպիցի ավազանում կա մոտ 70 միլիարդ բարել նավթ» [27]:

Նույն օրը, երբ տարածվեց այս տեղեկությունը, Ալմաթիում տեղի ունեցած Եվրասիական տնտեսական գագաթաժողովում իտալական ENI ընկերության նախագահ Գ.Մ.Գրոս-Պիեդրոն ասաց, թե Կասպից ծովում կա ընդամենը 7.8 միլիարդ բարել նավթ [28]:

ENI-ն միակ արևմտյան ընկերությունն է, որը ԽՍՀՄ փլուզումից հետո նոր նավթահանքեր է հայտնաբերել Կասպից ծովում, ինչպես ղազախական հատվածում գտնվող «Կաշագան» հանքավայրն է, և նրա նախագահի գնահատականն ավելի մեծ վստահության է արժանի, քան լրագրողական հուզիչ հաշվարկները: Դժբախտաբար, Ադրբեջանի նկատմամբ ներկայիս մեր *(ամերիկյան – Մ.Ե.)* նավթակենտրոն մոտեցումը

ծիծաղաշարժ է ու միամիտ: Մեր վերլուծաբաններն ու մտավոր շրջանակները հակված են գերագնահատելու որոշակի գործոնների կարևորությունը Ադրբեջանի ապագայի համար, օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն ու Կասպիցի նավթի ներուժը, և անտեսում են այն անասելի սոցիալական աղետը՝ սոցիալական դժգոհությունից ծագող անսանձ ուժերի գործոնը, որը, սովորաբար, տանում է դեպի համընդհանուր ապստամբության անվերահսկելի շրջափուլ և կարող է հեշտությամբ խորտակել տարածաշրջանի ուժային հավասարակշռությունը, ինչպես դա տեղի ունեցավ Իրանում, որը 1979թ. ամերիկամետությունից «հանկարծ» անցում կատարեց հակաամերիկականության [29]:

Նրանք սիրում են գերիշխող դարձած և արդեն չարչրկվող հրապարակումներով մեզ ասել, թե նավթային բումի համադարմանը ճիշտ է հենց խաչմերուկի համար: Դե ինչ, զննենք խաչմերուկը, որպեսզի տեսնենք, թե ինչ կա ամբողջ աշխարհին հպարտորեն ցուցադրվող հարստության հետևում:

«Դարի պայմանագրերի» կոնցեսիաները, որոնցից առաջինը ստորագրվեց 1994թ. Բաքվում տեղի ունեցած ցուցադրական արարողության ժամանակ, 2001թ. մեկը մեկի հետևից հոդս ցնդեցին: 1994-98թթ. նավթային բումի ժամանակ ստորագրված քսանմեկ միջազգային պայմանագրերից երեքը չեղյալ հայտարարվեցին, երբ հետազոտության արդյունքում հանքավայրերում չհայտնաբերվեցին առևտրի համար անհրաժեշտ քանակությամբ նավթի կամ գազի պաշարներ: Չորրորդ ընկերությունը Exxon-Mobil-ն էր, որը հայտարարեց, թե 2003թ. կդադարեցնի Կասպիցի ափամերձ գոտում գտնվող նավթահանքերի մշակման Ադրբեջանի հետ կնքած պայմանագիրը [30]:

1997թ. կնքվեց $2 մլրդ-ի պայմանագիր: Ռուսական նավթային հսկա Lukoil-ը հինգերորդն էր, որ հայտարարեց ադրբեջանական բոլոր կոնսորցիումներում իր բաժնետոմսերի վաճառքի մասին, ներառյալ՝ 10%-ոց բաժնեմասը 1994թ. ստեղծված ամենաառաջին և ամենամեծ կոնսորցիումում՝ *Azerbaijan International Operating Company*-ում (*AIOC*) [31]:

Մնացած տասնվեց նախագծերից իրականում գործում են միայն հինգը: Անցած տասնամյակում խոստացված $42 մլրդ-ից միայն $8 մլրդ-ն է ներդրվել Ադրբեջանում, որի 85%-ը ուղիղ գնացել է նավթային սեկտոր [32]:

Ի հակադրություն ասվածի՝ այդ նույն ժամանակահատվածում «էներգիայով աղքատ» Հունգարիայում $20 մլրդ-ի բազմապիսի ներդրումներ կատարվեցին: Եվ չնայած այդ նույն ընթացքում «նոր ադրբեջանցիները» հասցրին միայն Թուրքիայում (չհաշված

ուրիշ երկրները) կատարել $800 մլն-ի ներդրումներ, միևնույն ժամանակ նրանք արտասահմանյան օգնություն և ներդրումներ էին աղերսում [33]:

Գործող հինգ միջազգային կոնսորցիումներից միայն *British Petroleum*-ի կողմից ղեկավարվող *AIOC*-ն է արտադրում բավարար քանակությամբ հում նավթ, որը ոչ միայն չի համապատասխանում Պարսից ծոցի չափանիշներին, այլև չի արդարացնում արտահանման հիմնական նոր նավթամուղի կառուցման ծախսերը: Ադրբեջանում և Ղազախստանում գործող *Exxon-Mobil, Chevron-Texaco* և *Lukoil* խոշոր ընկերություններին խնդրեցին մասնակցել ԱՄՆ և տեղի կառավարությունների կողմից օժանդակվող Բաքու-Թբիլիսի-Ջեյհան (դեպի Թուրքիայի Միջերկրական ափ) նավթամուղի կառուցմանը, սակայն ապարդյուն:

Նավթային հարստությունների մասին հրապարակումներով առատ տասնամյա հրճվանքից հետո այժմ ծառանում է այն հարցը, թե որքան են Բաքվի շուրջ առկա կասպյան նավթի իրական պաշարները: Առաջին հարցն այն է, թե ինչու ԽՍՀՄ կառավարությունը հարյուրամյա ինտենսիվ սպառումից հետո իր ուշադրությունը Կասպից ծովից շեղեց դեպի հավերժ սառցադաշտերով պատված Սիբիրի նավթահանքերը: Անհնար էր, որ խորհրդային ինժեներները չկարողանային լուծել Կասպից ծովի ընդերքից նավթի արտահանման խնդիրը: Փաստն այն է, որ նրանք էին ափամերձ հատվածներից նավթի արտահանման պիոներները՝ սկսելով 1947թ. Կասպից ծովում «Նեֆթ Դաշլարի» նավթային աշտարակի տեղադրումից: ԽՍՀՄ նավթային հետազոտության ինստիտուտները երկարաժամկետ ուսումնասիրություններ էին կատարում խորհրդային երկրաբանների հայտնաբերած խորջրյա հանքերի զարգացման վերաբերյալ, սակայն նրանք մերժեցին այնտեղ աշխատելու բոլոր առաջարկները հավանական ցածր շահույթի և նավթահանման բարձր գնի պատճառով [34]:

Նրանց առողջ բանականությունը հաստատող փաստերի անհրաժեշտություն չկա: ԱՄՆ էներգետիկայի նախարարության տեղեկատվական բաժնի կատարած հաշվարկներով, Կասպիցի նավթի պաշարները կազմում են 18-34 միլիարդ բարել (որից 5 միլիարդը գտնվում է Ադրբեջանի ափամերձ շրջանում), այն դեպքում, երբ պետքարտուղարությունը մինչև անցած տարի պնդում էր, որ Կասպից ծովում կա $4 տրիլիոն հավանական արժողության 200 միլիարդ բարել նավթ: Ինչպես վերը նշեցի, Կասպից ծովում նավթ հայտնաբերած արևմտյան միակ ընկերության՝ իտալական *ENI*-ի նախագահը, ավելի հեռուն գնալով՝ ասել է, թե Կասպիցում կա ընդամենը 7.8 միլիարդ բարել նավթ:

Կասպիցի ընդհանուր պաշարները շատ չնչին են Սաուդյան Արաբիայի 262 միլիարդ և Իրաքի 112 միլիարդ բարել նավթի համեմատ: AIOC-ի կատարած հաշվարկներով, ներկայում արտադրվող օրական 100 հազար բարել նավթի դիմաց, մինչև 2005թ. առավելագույնս կարտադրվի օրական 500 հազար բարել նավթ (տարեկան 25 միլիոն տոննա) [35]:

Փոքր Քուվեյթը *OPEC*-ի սահմանած չափաբաժնի համաձայն, օրական արտադրում է 2,1 միլիոն բարել նավթ և այնքան նավթ ունի, որ մոտ 132 տարի կարող է արդյունահանել օրական մոտ 2 միլիոն բարել նավթ: Ռուսաստանն օրական արտադրում է 7.1 միլիոն, Սաուդյան Արաբիան՝ 8.8, Իրանը՝ 3.7, Իրաքը՝ 2.4 միլիոն բարել նավթ [36]:

Ավելին, Կասպից ծովում նավթահորատումը թանկ հաճույք է: Ամուր հողաշերտը, ընդերքի խորությունը, նավթահանքեր փորելու համար նախատեսված հատուկ սարքավորումները և սպառված հանքավայրերի երկրաբանական աննպաստ պայմանները եռապատկում են կասպյան օֆշորային *(ափամերձ - Մ.Ե.)* նավթի գինը՝ միջազգային միջին գնի համեմատ: Բացի այդ, ի տարբերություն Պարսից ծոցի լցանավային տերմինալների՝ ցամաքով շրջապատված կասպյան ավազանի հում նավթի գնին ավելանում են նաև մի քանի երկրների տարածքով անցնող նավթամուղների համակարգից գանձվող տարանցման սակագները: Եթե Սադամի վարչակարգի անկմանը զուգընթաց ՄԱԿ-ը հանի Բաղդադի դեմ կիրառվող առևտրական պատժամիջոցները և Արևմուտքը ներդրումներ կատարի մոռացության մատնված Իրաքի նավթային սեկտորում, հնարավոր է, որ տեղի ունենա նավթի միջազգային գների անկում: Վաշինգտոնում գործող «Ռազմավարական և միջազգային հետազոտությունների կենտրոնի» (*CSIS*) հաշվարկներով, եթե մեկ բարել նավթի գինը ընկնի $6-ով, ապա Ադրբեջանի տարեկան նավթային եկամուտները կիսով չափ կկրճատվեն: Իսկ եթե մեկ բարելի գինը իջնի $3-ով, ապա Կասպիցի ոչ մի նավթային կոնսորցիում այլևս շահույթ չի ստանա [37]:

ԽՍՀՄ փլուզումից հետո արևմտյան երկրաբանական բոլոր հետազոտությունների արդյունքում Կասպիցում դեռևս չեն հայտնաբերվել զգալի մեծության նոր հանքավայրեր, չհաշված ղազախական հատվածում գտնվող «Կաշագան» հանքավայրը: Անկախ այդ պաշարների վերջնական չափից, այժմ պարզ է, որ Կասպիցի նավթին վերաբերող խոսակցությունների մեծ մասը լոկ գայթակղիչ սուտ էր: Փորձարկման արդյունքները կասկածի տակ են դրել հիմնական նոր նավթամուղի կառուցման հարցը: Վաշինգտոնյան երկու անկախ հետազոտական խմբերի կատարած հաշվարկների համաձայն, Բա-

քու-Ջեյհան նավթամուղի գործարկման համար ԱՄՆ կառավարությունը պետք է տարեկան $200 մլն-ի ֆինանսական աջակցություն ցույց տա [38]:

Ութամյա բանակցություններից հետո, 2002թ. սեպտեմբերի 18-ին, Բաքվի մոտ տեղի ունեցած մեկ այլ ցուցադրական արարողության ժամանակ Ադրբեջանի, Վրաստանի և Թուրքիայի նախագահները վերջապես, կոտրելով սառույցը, սկիզբ դրեցին Բաքու-Թբիլիսի-Ջեյհան «բարգավաճման նավթամուղի» կառուցմանը: Նախատեսվում էր, որ 1.730 կիլոմետր երկարություն ունեցող նավթամուղի տարողությունը պետք է հասնի տարեկան 50 միլիոն մետրային տոննայի *(50 միլիոն տոննայի - Մ.Ե.)*, մինչդեռ պաշտոնապես Ադրբեջանը տարեկան արտադրում է մոտ 15 միլիոն տոննա. ԱՀՆՊԸ-ը՝ 9 միլիոն տոննա, *AIOC*-ը՝ 5 միլիոն տոննա, իսկ մնացածը՝ մյուս կոնսորցիումները: Գործող Բաքու-Սուփսա (Վրաստանի սևծովյան ափ) նավթամուղը ներկայում լրացնում է իր տարեկան 18 միլիոն տոննա տարողության միայն 1/4-րդը [39]:

Որտեղի՞ց է գալու Բաքու-Ջեյհան նավթամուղի համար անհրաժեշտ 50 միլիոն տոննա նավթը: Նույնիսկ *AIOC*-ին ենթակա նախագծերը՝ իրենց առավելագույն արտադրությամբ, բավականին հեռու են նվազագույնը՝ օրական 1 միլիոն բարել նավթի արտադրությունը, ապահովելուց, որն անհրաժեշտ է $3 մլրդ արժողության այդ անլուրջ ձեռնարկի ֆինանսական իրագործելիության համար: Սակայն, մի կողմ թողնելով նավթամուղի տնտեսական շահավետությունը, պետք է ասել, որ այն նշանավորեց ամերիկյան ազդեցության մեծացումը տարածաշրջանում:

Տրամաբանակա՞ն է, արդյոք, շարունակել Կասպիցի նավթի մասին հեքիաթը

Եթե Կասպիցի նավթի պաշարներն այդքան մեծ չեն, ապա ինչու է ԱՄՆ-ի համար այդքան կարևոր այդտեղ գտնվելը: Առաջին պատճառը քաղաքական է: Համաձայն մեր «մետաքսե ճանապարհի ռազմավարության», Կովկասը կարևոր աշխարհաքաղաքական պարանոց է, որը Սև և Կասպից ծովերը «մետաքսե ուղիով» կապում է Կենտրոնական Ասիային: Ավելին, Վաշինգտոնը փորձում է սահմանափակել Ռուսաստանի ազդեցությունը տարածաշրջանում՝ միևնույն ժամանակ կրճատելով Իրանի հնարավոր դաշնակիցների թիվը: Էներգակիրների ենթադրվող պաշարներով հրապուրված՝ ամերիկյան ներդրողները ֆինանսական աջակցություն ցույց կտան տեղի բարեկամական վարչակազմերին և նրանց կխրախուսեն մեր ռազմավարական ծրագրերի մաս կազմել:

Ինչ վերաբերում է Ադրբեջանի կառավարությանը, ապա այն արևմտյան խնամակալության կարիքն ունի՝ Հայաստանի հետ հակամարտության մեջ գտնվելու և իրենից ավելի հզոր Իրանին ու Ռուսաստանին դիմագրավելու համար: Այդ դեպքում ինչո՞ւ Արևմուտքին տարհամոզել, թե Ադրբեջանի ենթադրվող հարստությունը զուտ խորամանկություն է: Բացի այդ, ադրբեջանական իշխանությունը քաջատեղյակ է միջազգային քաղաքականության մեջ գործող այն հանրահայտ ճշմարտությանը, թե որքան մեծ են նավթային պաշարները, այնքան արևմտյան կառավարություններն ավելի հանդուրժող են նավթային տերություններում մարդու իրավունքների ոտնահարման վերաբերյալ բացասական զեկույցների հանդեպ: Բայց ավելի սակավ նավթարտադրություն ունեցող երկիրն իր վրա է բևեռում միջազգային ավելի մեծ ուշադրություն՝ կապված տեղական ժողովրդավարության վիճակի հետ:

Երկրորդ, հեշտությամբ կարելի է բացատրել, թե ինչու են միջազգային նավթային ընկերությունները շահագրգռված կասպյան նավթի պատրանքը շարունակելու մեջ: Բոլոր գործարքներն իրականացվում են բաժնետիրական ընկերությունների և դրանց բաժնետերերի կողմից, որոնք իրենց հիմնական շահույթը քաղում են ոչ թե հաջողակ առևտրային գործողությունների արդյունքում առաջացած շահաբաժինների *(դիվիդենտներ - Մ.Ե.)* աճից, այլ ֆոնդային և առևտրային բորսաներում իրենց բաժնետոմսերի և ֆյուչերզների *(ապագայում իրականացվելիք գործարքներ, անգլ. future-ապագա բառից - Մ.Ե.)* գնի բարձրացումից: *Enron, Worldcom* և ամերիկյան այլ հսկա ընկերությունների կործանումը բացահայտեց, որ բաժնետոմսերի գները թելադրվում են ոչ թե իրական տնտեսական ցուցիչներով, այլ *Wall Street*-ի վերլուծաբանների ներկայացրած սին խոստումների մթնոլորտում:

Հենց սա է Ադրբեջանում արևմտյան բիզնես-ներդրումների իրական էությունը: Մասնակցելով կասպյան շահութաբեր ծրագրերին և տարածելով հսկայական պաշարների վերաբերյալ ուռճացված լուրեր՝ այդ ընկերությունները բարելավում են իրենց բաժնետիրական իմիջը և մեծ եկամուտներ ստանում՝ առանց նույնիսկ մեկ բարել նավթ արդյունահանելու: Իրականում, եթե նրանք սկսեն լրջորեն զբաղվել նավթարդյունահանմամբ, կբացահայտվի նավթային պաշարների իրական քանակը: Չեխ խարդախ գործարար Վիկտոր Կոզենիի (*Viktor Kozeny*) գործը հիանալի լուսաբանում է այս երևույթը [40]:

Կոզենին $6.3 մլն-ով ձեռք բերեց պետական ունեցվածքը քաղաքացիներին սեփականաշնորհելու նպատակով 1997թ. Ադրբեջանի կառավարության թողարկած 7.5 մի-

լիոն վաուչերների 25%-ը: Ապա նա $450 մլն հավաքեց ամերիկյան ներդրողների մի խմբից, որի մեջ էին մտնում այնպիսի բարձրաստիճան պաշտոնյաներ, ինչպիսիք են, օրինակ, *Wall Street*-ի ապահովագրական ֆոնդի հանրահայտ մենեջեր Լեոն Քուփերմանը (*Leon Cooperman*) և ԱՄՆ Սենատի մեծամասնության նախկին առաջնորդ Ջորջ Միթչելը (*George Mitchell*), Ադրբեջանական Հանրապետության նավթային պետական ընկերության ակնկալվող սեփականաշնորհմանը մասնակցելու նպատակով: Ավելի ուշ Ադրբեջանի ղեկավարությունը որոշեց, որ ԱՀՆՊԸ-ը պետք է պահպանի պետական սեփականատիրոջ իր կարգավիճակը: Այժմ ներդրողներն ասում են, թե նրանք գնեցին այդ վաուչերները միայն այն բանից հետո, երբ Կոզենին հավաստիացրեց, թե մինչև 1998թ. վերջը Ադրբեջանի կառավարությունը պատրաստվում է սեփականաշնորհել ԱՀՆՊԸ-ը: Ադրբեջանական պաշտոնյաներն ընդունում են, որ այդպիսի խոստումներ տրվել են: Այժմ խաբված ամերիկյան ներդրողները Լոնդոնում և Նյու Յորքում $100 մլն-ի դատական գործ են հարուցել ընդդեմ Հեյդար Ալիևի, նրա որդու՝ Իլհամի և սեփականաշնորհմամբ զբաղվող ադրբեջանցի երեք պաշտոնյաների դեմ: Դատարանում Կոզենին պնդում էր, թե Ադրբեջանի նախագահն իր դրական որոշման դիմաց իրենից անձնապես պահանջել է մի կլորիկ գումար և հավաստիացնում էր, որ ինքը $83 մլն է տվել Հեյդար և Իլհամ Ալիևներին ու երեք այլ ադրբեջանցի բարձրաստիճան պաշտոնյաների [41]:

Երրորդ դրդապատճառ. ինչո՞ւ են ադրբեջանական իշխանությունները խարդախությունների դիմում այն պայմանագրերում, որոնք այդքան ցանկանում են կնքել, և ո՞րն է նրանց շահը: Եթե մի կողմ թողնենք Կասպիցի նավթի առատությամբ պայմանավորված իրենց իսկ սեփական կարևորության ուռճացված զգացողությունը, նրանց նպատակը ամբողջովին պրագմատիկ է. որքան շատ լինեն արտասահմանյան ներդրողները, այնքան ավելի հեշտ կլինի ամրապնդել բռնակալական կարգերը և բարգավաճ «երկրորդ Քուվեյթի» հեքիաթներով սանձել հասարակական դժգոհությունը, չհաշված արևմտյան կորպորատիվ կեղտոտ գումարները և ղեկավարող վերնախավին հսկայական գործարքներից տրված կաշառքները, որոնք առանց երկիր մտնելու անմիջապես ուղարկվում են արտասահմանյան բանկային անձնական հաշիվների վրա: Անդրադառնալով Կասպիցի նավթային պաշարների վերաբերյալ Ադրբեջանի նախագահ Ալիևի գնահատականներին՝ Հայաստանի նախագահ Քոչարյանը Դավոսում տեղի ունեցած Միջազգային տնտեսական համաժողովում շատ տեղին ասաց. «Տեսնես Կասպից ծովում ջուր մնացե՞լ է, թե՞ միայն նավթ է» [42]:

Այն ժամանակ, երբ մեր արդարադատության նախարարությունը մատների արանքով է նայում կոռուպցիայի մակարդակով աշխարհում երրորդ տեղը գրավող Ադրբեջանին, Շվեյցարիայի իշխանությունները ենթադրվող կաշառքների և բանկային գաղտնի հաշիվների հայտնաբերման ուղղությամբ հետաքննություն են սկսել, որից անմասն չեն մնացել ամերիկյան նավթային կոնգլոմերատները և Ղազախստանի պաշտոնյաները: Համաձայն *The New Yorker* ամսագրում տպագրված մի պատմության, Mobil և Chevron ընկերությունները 1996թ. կասկածելի գործարքների միջոցով «Թենգիզ» նավթահանքի բաժնետոմսերի 20%-ը ձեռք բերելու համար տասնյակ միլիոնավոր դոլարներ են վճարել բարձրաստիճան պաշտոնյաներից կազմված հանձնաժողովներին, այդ թվում նաև նախագահ Նազարբաևին [43]:

Այն բանից հետո, երբ շվեյցարացի դատախազները սառեցրեցին Նազարբաևի բանկային հաշիվները, չնայած վերջինիս պնդումներին, թե նմանատիպ հաշիվներ գոյություն չունեն, երկրի վարչապետը հաստատեց Նազարբաևի անունով այդպիսի հաշիվների գոյությունը, որի վրա նախագահը կուտակել էր մոտ մեկ միլիարդ դոլար [44]:

Վերջին տասնամյակում ադրբեջանցի ղեկավարները բազմաթիվ նմանատիպ գործարքներ են կնքել, սակայն ոչ մի տեղեկություն չկա անհետացած «ստորագրված բոնուսների» գտնվելու վայրի վերաբերյալ, իսկ այդ գործարքները աուդիտի ենթարկելու ընդդիմության անընդմեջ պահանջները վրդովեցուցիչ կերպով արհամարհվում են թե՛ Բաքվում և թե՛ Վաշինգտոնում: Օրինակ, նավթային ընկերությունների՝ Ադրբեջանի օֆշորային նավթահանքերում հորատման իավունք ստանալու համար կատարած հսկայական բոնուսային վճարումները խիստ թերի են ներկայացվել: Կառավարությունը Արժույթի միջազգային հիմնադրամին (ԱՄՀ-*IMF*) տեղեկացրել է, որ խորջրյա հիմնական հատվածում աշխատելու իրավունք ստանալու համար 1994թ. անցկացված աճուրդից ստացվել են $285 մլն-ի բոնուսային վճարումներ: Բայց կոնսորցիումի մեջ մտնող ընկերությունները պնդում են, որ նրանք վճարել են մոտ $400 մլն [45]:

Ի վերջո, քանի որ մենք ապրում են ԶԼՄ-ների դարաշրջանում և կրում ենք նրանց ուղղություն տվողների ազդեցությունը, արժե ուշադրություն դարձնել 1991թ. Կասպիցի «ոսկեբեր հանքերի» լեգենդի վրա առաջացած ու զարգացում ապրած, ինչպես նաև սենսացիաներ ստեղծող մամուլի հետ համագործակցող լոբբիի վրա: Այն վաշինգտոնյան վերլուծաբաններից, իրավաբանական կազմակերպություններից, ներդրումներ կատարող բանկիրներից (ինչպիսին է Կոզենին), առևտրական ընկերություններից, նավթամուղների կառուցմամբ զբաղվող ընկերություններից, անսանձ լրագրողներից, հե-

ռուստաաստղերից, մեծ նավթի վերահսկողության ներքո գտնվող քաղաքական գործիչներից, փառամոլ ակադեմիկոսներից, նավթային ընկերություններին «խորհուրդ տվող» թոշակի անցած դիվանագետներից, Բաքվի սոված պաշտոնյաներից և ընդդիմության առաջնորդներից, այնտեղի մեր խորամանկ փախստականներից և այստեղ գտնվող կովկասցի գործազուրկ գաղթականներից կազմված խառնիճաղանջ ամբոխ է, որը միաձայն պնդում է, թե Ադրբեջանը նստած է նավթի «հսկայական» ծովի վրա: Քանզի նրանք բոլորն էլ ցանկանում են հետազոտության համար նախատեսված գումարների, շինարարական պայմանագրերի, անձնական նշանակումների և խորհրդատվության համար հատկացվող վճարների տեսքով կատարվող ներդրումների մեծ կարկանդակից դրամական յուղոտ պատառ պոկել:

2000թ. մարտի 2-ին *The New York Times*-ում տպագրված մի հոդվածում ասվում էր, թե մասնավոր իրավաբանական գործունեությամբ զբաղվող ոմն Էդվին Գրեյվիս (*Edwin Graves*) ամեն կես տարին մեկ նավթային ընկերություններից $70 հազար է ստանում, որպեսզի նպաստի 1992թ. ընդունված «Անկախության աջակցման ակտի» (*Freedom Support Act*) 907-րդ հոդվածը չեղյալ հայտարարելուն: Այդ ակտի համաձայն, ԱՄՆ-ը *(ԱՄՆ կառավարությունը - Մ.Ե.)* չի կարող ուղղակի օգնություն ցույց տալ Ադրբեջանին այնքան ժամանակ, քանի դեռ վերջինս չի դադարեցրել Հայաստանի տնտեսական շրջափակումը:

Ադրբեջանին ցուցաբերվելիք օգնության նկատմամբ կիրառվող արգելքը չեղյալ հայտարարելու նույն միջոցները 1999թ. սենատոր Սեմ Բրաունբեքը (*Sam Brownback*) կցեց «մետաքսե ճանապարհի ռազմավարության ակտին» (*Silk Road Strategy Act*): «Մեծ նավթը» աջակցություն է ցույց տալիս այլ քաղաքական ստորաքարշների, ազդեցիկ դեմքերի և լոբբիստների, ԱՄՆ - Ադրբեջան «գործարար խորհուրդներին», միջոցներ է տրամադրում «Կասպիցի հեքիաթը» հաստատող ակադեմիական հետազոտությունների և հրատարակումների համար և իր թանկարժեք գովազդը հետ է վերցնում այն պարբերականներից, որոնք կասկածի սերմեր են ցանում կամ ճոճում նրանց կասպյան նավը [46]:

Լոբբիստներն իրենց ճնշիչ ձեռքի տակ են պահում այն մի քանի երկչոտ ընդդիմախոսներին, որոնք փորձում են սողոսկել վերնախավի ստեղծած արգելքների միջով և նախազգուշացնել հասարակությանը ԱՄՆ ազգային շահերին սպասվող հետևանքների մասին: Եթե որևէ ճշմարտախոս համարձակվի մերկացնել կասպյան մեծամոլությունը և կասկածի տակ դնի մտավոր շրջանակների իրազեկության աստիճանը, այս աղմկոտ ամբոխը նրան կմեղադրի՝ ասելով, թե նա խոչընդոտում է տարածաշրջանում Ամերիկայի ծավալած բիզնես-ռազմավարության զարգացման գործընթացին, նրա կարծիքը

կարհամարհվի, նրան կկոչեն «չկողմնորոշված արևելամետ» կամ «ոչ հայրենասիրական վարք դրսևորող», հատկապես սեպտեմբերի 11-ից հետո [47]:

Բայց դեռևս առկա է այն դաժան փաստը, որ հարյուրամյա հիմնավոր նավթարդյունահանումից հետո Կասպից ծովում այլևս այնքան նավթ չի մնացել, որքան մենք ցանկանում ենք տեսնել: Այս պաշարները բավական են Կովկասին էներգիայով ապահովելու համար, որտեղ էլեկտրականությունը, գազը և վառելիքը խստորեն սահմանափակված են, ներառյալ՝ «էներգիայով հարուստ» Ադրբեջանը, որն օգտագործում է ռուսական բնական գազը և էլեկտրաէներգիան՝ սպառելով ավելի շատ էներգիա, քան արտադրում է: Սակայն դրանք հարմար չեն՝ ընդգրկվելու համար «մետաքսե ճանապարհի ռազմավարական ակտի» մեջ, որը տարածաշրջանում կարգուկանոն հաստատելու և թերությունները շտկելու ընդամենը մեկ այլ անօգուտ և միջոցներ վատնող փորձ է:

Տարածաշրջանի ենթադրյալ տնտեսական առավելության վերաբերյալ «ռազմավարության» մյուս մասը նույնքան անհեթեթ է դարձել՝ սկսած 16-րդ դարից, երբ աշխարհագրական այն մեծ հայտնագործության շնորհիվ, որ Եվրոպայից Ասիա ապրանքներ տեղափոխելը ծովով ավելի էժան է, քան ցամաքով, արժեզրկվեց տարածաշրջանի՝ որպես «մետաքսե մեծ ուղու» (միջմայրցամաքային առևտրական ճանապարհ, որը 1500 տարի կապում էր Չինաստանը Միջերկրական ծովին), մի մասի նշանակությունը: Այդ ժամանակվանից ի վեր մնալով «համաշխարհային տնտեսության» արվարձաններում՝ Անդրկովկասը ԱՄՆ-ի համար չի հանդիսանում ազգային կենսական շահեր ներկայացնող տարածաշրջան: Օրինակ, Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի $10 մլրդ կազմող միացյալ ՀՆԱ-ն միջազգային չափանիշներով շատ չնչին թիվ է, եթե համեմատենք, օրինակ, *British Petroleum*-ի շրջանառության հետ, որը 2000թ. կազմել է $148 մլրդ [48]:

Խառնաշփոթը Լեռնային Ղարաբաղի շուրջ և հայրենասիրական աղմուկը

2001թ. փետրվարի 21-ին Ադրբեջանի պաշտոնական մամուլը տպագրեց Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման վերաբերյալ 1997թ. հուլիսին, 1997թ. դեկտեմբերին և 1998թ. նոյեմբերին ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից հաջորդաբար առաջարկված նախագծերը [49]:

Խաղաղության այդ պայմանագրի առաջին հոդվածի համաձայն, Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն ու Ադրբեջանական Հանրապետությունը պետք է «կազմեն մեկ

ընդհանուր պետություն», որը պետք է ղեկավարի երկու կողմերի ներկայացուցիչներից կազմված «միացյալ հանձնաժողովը», ընդ որում՝ երկու կողմերն էլ իրենց սահմանադրությունները պետք է համաձայնեցնեն ստորագրվելիք խաղաղության պայմանագրին: Այս հրապարակումները հիմնականում բացասական արձագանք գտան Բաքվում:

Չնայած ընդդիմության առաջնորդները դեռևս շարունակում են կոչ անել պատերազմի միջոցով վերանվաճել կորսվածը (միաժամանակ հուսալով, որ գահընկեց կանեն նախագահին), սակայն դասալքության բարձր աստիճան ունեցող Ադրբեջանի զինված ուժերն ի վիճակի չեն նոր պատերազմ սկսել: Իրականում, պատերազմի կողմնակից որոշ նախարարների, խորհրդարանի անդամների և լրատվամիջոցների ներկայացուցիչների բարձրացրած աղմուկը բանակցություններ վարելու Ադրբեջանի ռազմավարության սոսկ մի մասն է և նպատակ ունի արագացնել խաղաղության գործընթացը՝ միևնույն ժամանակ ցուցադրելով, թե ինչպես է նախագահ Ալիևը դիմագրավում պատերազմը վերսկսելու ներքին ճնշումները: Շրջանը *(նկատի ունի ԼՂՀ-ն - Մ.Ե.)* հետ գրավելու վերաբերյալ քննարկումներն ազգային մոլեգնության նման բան են դարձել: Սա այն հազվադեպ հասարակական բանավեճերից է, երբ պաշտոնյաները չեն մրցակցում՝ իրենց հայրենասիրությունն ապացուցելու համար զինված ուժերին օգնության կանչելով, եթե, իհարկե, Ալիևը կարողանա շրջանը հետ վերադարձնել բանակցությունների միջոցով: Սակայն այդպիսի մարտավարությունն, ակնհայտորեն անարդյունավետ լինելուց բացի, կարող է սպառնալիք ներկայացնել Ադրբեջանի իշխանությունների համար:

Սկսած 1988թ., երբ հայկական անկլավը դուրս եկավ Ադրբեջանի կազմից և Ադրբեջանում իշխանությունը ժառանգելու հերթափոխությունը հասավ գագաթնակետին, Ադրբեջանական ԽՍՀ-ն աստիճանաբար սկսեց կորցնել իր տարածքի մի մասը, իսկ գրգռված ամբոխը հաջորդաբար պաշտոնանկ էր անում նախագահական պալատում նստող հերթական քավության նոխազներին՝ Կ.Բաղիրովին, Ա.Վեզիրովին, Ա.Մութալիբովին, Ա.Էլչիբեյին և մի քանի դրածոների: Հեյդար Ալիևը մաքիավելիական ոճի, չափից ավելի խելացի քաղաքական գործիչ էր, որպեսզի իր տիրապետության ժամանակ թույլ չտար այդ արատավոր շրջանի կրկնությունը: Նա ինքը կարող էր դառնալ իր հոգնատանջ ժողովրդի հասարակական պոռթկումների զոհը, ինչը տեղի ունեցավ իր նախորդների հետ: Սակայն լինելով ավելի խելացի և չցանկանալով ընդդիմությանն ընձեռել այդպիսի հնարավորություն՝ իշխանությանը տիրանալուն պես Ալիևը 1994թ. զինադադար կնքեց Հայաստանի հետ (որը մինչ այդ հասել էր իր ռազմավարական նպատակներին) և կարողացավ այն պահպանել բավականին երկար ժամանակ՝ կասեցնելով ինք-

նակործանման ամեն մի զարգացում, այսպիսով չարդարացնելով այն սպասելիքները, թե նա կկրկնի իր նախորդների ռազմատենչության ծեծված ուղին:

2001թ. փետրվարի 23-24-ին Ալիևը խորհրդարանի երկօրյա նիստի ժամանակ ասաց, որ Մինսկի խմբի բոլոր երեք առաջարկներն էլ անընդունելի են Ադրբեջանի համար: Միևնույն ժամանակ նա պաշտպանեց հարցի լուծումը գտնելու իր սեփական ջանքերը և նշեց, որ անձամբ 98 անգամ հանդիպել է Մինսկի խմբի ներկայացուցիչների հետ, հակամարտության խնդիրը 18 անգամ քննարկել է ԱՄՆ նախագահի կամ պետքարտուղարի, 16 անգամ՝ Ֆրանսիայի նախագահի, 28 անգամ՝ Ռուսաստանի նախագահի և 78 անգամ՝ թուրք տարբեր պաշտոնյաների հետ:

Ինչ վերաբերում է հարցի ռազմական լուծման հնարավորությանը, Ալիևն ասաց, թե Ադրբեջանի զինված ուժերը դեռ այդքան ուժեղ չեն [50]:

Միևնույն ժամանակ հակամարտության խաղաղ լուծման Ալիևի քաղաքականությունն արտացոլում է ադրբեջանական հասարակության ամենատարբեր խավերում առկա այն ծայրահեղ դժկամությունը, որը կապված է պատերազմը վերսկսելու հետ: Ռազմական ավանդույթների բացակայությունը հասարակ ադրբեջանցիների մոտ բացահայտ հեգնական վերաբերմունք է ձևավորել սեփական քաղաքացիական պարտքի նկատմամբ, քանի որ անցած տասնամյակում ականատեսն են եղել այն բանի, որ ծախու քաղաքական գործիչների, գեներալների, գործարարների ժառանգներից և ոչ մեկը չի ծառայել սահմանագծի վրա՝ փոխարենը ներգրավվելով շահութաբեր նավթային բիզնեսում և արտահանման-ներկրման մութ գործարքներում:

Իր հերթին ադրբեջանական վերնախավը պայքարում է հանուն բարձրագույն իշխանության, որտեղ Իլհամ Ալիևը, որին հայրը պատրաստում էր նախագահական աթոռի համար, գործում է որպես նավթային ազգային ընկերության գլխավոր տնօրեն՝ Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ազգային փափագն իրականացնելու և մեկ միլիոն փախստականներին իրենց տները վերադարձնելու փոխարեն: Նույնիսկ ակադեմիկոսները, որոնք 1990-ական թթ. սկզբին հայրենասիրական ճառերի հիմնական հեղինակներն էին, այժմ լռել են:

2001թ. ապրիլին ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի, ֆրանսիացի և ռուս համանախագահները Քի Ուեսթում *(Key West, ԱՄՆ Ֆլորիդա նահանգ – Մ.Ե.)* մի քանի հանդիպումներ ունեցան Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հետ, ինչը, սակայն, որոշակի արդյունքների չհանգեցրեց: Քննարկման նյութ դարձած թեմաների մեջ էին գրավված տարածքներից Հայաստանի զորքերի դուրսբերումը, Հայաստանի շրջափակման

վերացումը, տեղահանված մարդկանց ու փախստականների վերադարձն իրենց տները և Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը խաղաղ կարգավորման վերջնական տարբերակում: Պաշտոնական հաշվետվության մեջ համանախագահները նշեցին, որ իրենք պատրաստում են «բոլոր խնդիրների լուծմանը վերաբերող նոր համապարփակ առաջարկներ» [51]:

Հետևելով վերջին տասնամյակի գործընթացներին՝ չի կարելի չնկատել, որ Անդրկովկասը խոցելի և դյուրազգաց տարածաշրջան է, որը տեղի խնդիրները սեփական ուղիով լուծելուն ուղղված մեծ տերությունների հատուկ հոգածության կարիքն ունի: Ինչպես Կովկասի պատմական փորձն ապացուցեց, դիվանագիտական ավանդական միջոցները, ինչպիսիք են «Հող խաղաղության դիմաց» բանաձևը կամ միջազգային խաղաղապահ ուժերը, այստեղ չեն գործում: Ի տարբերություն Իսրայելի, կովկասյան բոլոր երկրներն անցկացրել են էթնիկական զտումներ, որը, թվում է, նրանց ազգային հոգեբանության կարևոր տարրն է: Ի տարբերություն նախկին Հարավսլավիայի, որտեղ տեղակայվեցին ՆԱՏՕ-ի խաղաղապահները, Անդրկովկասի հանրապետությունները սեղմվել են տարածաշրջանային հզոր տերությունների՝ Ռուսաստան, Իրան և Թուրքիա, արանքում, որոնցից յուրաքանչյուրն այստեղ ունի իր շահերը, ներառյալ՝ տարածքային պահանջները:

ԱՄՆ քաղաքականությունը Ադրբեջանում

Մենք բոլորս ցանկանում ենք հավատալ, որ համաձայն էներգիայի պաշարների և ռազմավարական ծրագրերի մեր գնահատման, երևակայական Ադրբեջանը ձեռք է բերել կայունության, ժողովրդավարության և տնտեսական զարգացածության բավարար մակարդակ: Եկեք պարզապես լսենք մեր բազմաթիվ փորձագետներին, որոնք, հավանաբար իրականությունը ստուգելու նպատակով, վերադառնում են Բաքու կատարած իրենց կանոնավոր «փաստահավաք» ուղևորություններից: Մի փոքր վրդովվելով ժողովրդավարության համար և ամբողջովին արհամարհելով հասարակական բարեկեցությունը՝ նրանք սկսում են գովաբանել երկրի ռազմավարական արժեքն ու նավթային բումը՝ եզրակացություն անելով միայն քաղաքի *(Բաքվի - Մ.Ե.)* կենտրոնում սնկի պես աճող ժամանակակից խանութներից (օտարերկրյա ընկերությունների համար աշխատող ադրբեջանցին իրեն չի կարող թույլ տալ խնայել մի քանի հազար դոլար), պերճաշուք ռեստորաններից և արտասահմանյան մեքենաներից, դարի շնչով կառուցվող առանձնատներից և ապակեպատ նոր բարձրահարկերից [52]:

Մարդաբանական աղմկահարույց ուսումնասիրություններից, պատմական հետազոտություններից, մարդու իրավունքների հետ կապված հարցերից, քաղաքական անմիջական խորհրդատվությունից, տնտեսական վերլուծություններից և մեր կառավարությանն ուղղված՝ առանձնահատուկ քաղաքական կուլտուրա ունեցող երկրում նավթային վերահսկողության ներքո գտնվող երկակի չափանիշներով քաղաքականության բարդությունների մասին հետևողական նախազգուշացումներից այն կողմ ամերիկյան արևելագետների համար շատ դժվար է հասկանալ, թե որոնք են ադրբեջանական հասարակությանն առաջնորդող ուժերը: Պետքարտուղարությունը վարում է Ադրբեջանը (որը չարդարացրեց «մեծ եղբոր» սպասումները) վերահսկելուն ուղղված՝ քննադատությունից դուրս մի քաղաքականություն: Մինչև հաջորդ ակնհայտ սխալը, ներկայում մենք տարված ենք այն պարզամիտ պատրանքով, թե նավթային աճող արտադրությունը կարող է Ադրբեջանի բոլոր ցավերի համադարման հանդիսանալ: Ի լրումն՝ մեզ մոլորեցնում են նավթային ընկերությունների առանձնահատուկ շահերը: Սակայն իմ՝ վերլուծաբանի պարտականությունն է հիշեցնել, որ առանց ժողովրդավարության և միջին խավի առկայության երկիրը չի կարող բարգավաճել: Ադրբեջանը երկուսի կարիքն էլ ունի, և մենք կկորցնենք ավելին, քան նավթը, երբ ութսունամյա առաջնորդի վախճանով ավարտվի Ալիևի ժամանակաշրջանը: Սպիտակ տանը նախագահ Ալիևին ցուցաբերած ջերմ ընդունելությունները վկայում են, որ անտարբերություն դրսևորելով էթնիկական զտումների, մարդու իրավունքների ոտնահարման դեպքերի, ընտրությունների ծաղրապատկերի, համընդհանուր կոռուպցիայի, միջազգային օգնությունը յուրացնելու, քաղաքական ճնշումների, բռնատիրական կարգերի և անձնապաշտության նկատմամբ, թե՛ Քլինթոնի, թե՛ Բուշ-կրտսերի վարչակազմերը Ադրբեջանի նկատմամբ վարած քաղաքականության մեջ ակնհայտ հետին պլանում են թողնում ժողովրդավարության հարցը, մի բան, որը Կոնգրեսը երբեք չէր հանդուրժի եվրոպական որևէ պետության պարագայում, օրինակ՝ Բելառուսի: Վերջին տասնամյակի ընթացքում Ադրբեջանի նկատմամբ ԱՄՆ կառավարության գործադրած հիմնական ճնշումն իրականացվում էր 1992թ. Կոնգրեսով անցկացված «Անկախության աջակցման ակտի» 907-րդ հոդվածի միջոցով, ըստ որի՝ Ադրբեջանը չէր կարող ստանալ նախկին խորհրդային հանրապետությունների համար նախատեսված որևիցե օգնություն, մինչև չվերացներ Ղարաբաղյան պատերազմի արդյունքում Հայաստանի նկատմամբ կիրառված տնտեսական շրջափակումը [53]:

Սեպտեմբերի 11-ի ճգնաժամը և մեր ներխուժումը Աֆղանստան առիթ հանդիսացան վերացնելու Ադրբեջանի նկատմամբ եղած էմբարգոն: 2002թ. հունվարի 25-ին նա-

խազահ Ջորջ Բուշ-կրտսերը վերջապես ստորագրեց 907-րդ հոդվածից հրաժարվելու երկար սպասված փաստաթուղթը, ըստ որի՝ Ադրբեջանն այնքան ժամանակ չէր ստանալու ԱՄՆ կառավարության օգնությունը, քանի դեռ շարունակում էր Հայաստանի շրջափակումը: 907-րդ հոդվածից հրաժարվելը երախտագիտություն էր միջազգային հակաահաբեկչական կոալիցիային Ալիևի ցուցաբերած օժանդակության դիմաց: Այն Ադրբեջանին հնարավորություն տվեց 2002թ. ստանալ $50 մլն ամերիկյան օգնություն:

907-րդ հոդվածի սառեցումից հետո Պենտագոնի պատվիրակությունը 2002թ. մարտին այցելեց Բաքու, և համաձայնություն ձեռք բերվեց ստեղծել համատեղ ռազմական կոմիտե: Այժմ մենք Ադրբեջանին անմիջական օգնություն ենք ցուցաբերում, որպեսզի այն բարելավի ծովային սահմանները պաշտպանող նավատորմի կարողությունները: Այս տեղաշարժն առաջին հերթին նշանակում է, որ Վաշինգտոնն ուղղակիորեն հակադրվում է Իրանին՝ Ադրբեջանին ռազմական օգնություն ցույց տալու հավանականության հետ միաժամանակ, որն ուղղված է Կասպից ծովում իր տարածքն ընդլայնելու և այդ նպատակով ուժ կիրառելու Թեհրանի ակնհայտ ցանկության դեմ: Վերջերս Իրանը 38 նոր ռազմանավ ջուրն իջեցրեց Կասպից ծով:

2001թ. ամռանն այդ ռազմանավերը ստիպեցին նավթի հետախուզմամբ զբաղվող ադրբեջանական երկու նավերին թողնել, Թեհրանի համոզմամբ, իրանական տարածքային ջրերը և հարկադրեցին դադարեցնել նավթահանքերի նկատմամբ *British Petroleum*-ի կոնցեսիան: Օրինակ վերցնելով 2001թ. սեպտեմբերի 20-ին Կոնգրեսի համատեղ նիստում Ջորջ Բուշ-կրտսերի ելույթից՝ ադրբեջանական պաշտոնյաները սկսեցին կիրառել մջազգային հակաահաբեկչական ճարտասանություն, և որպեսզի արդարացնեն Ղարաբաղյան խնդրի նկատմամբ իրենց դիրքորոշումն ու միջազգային զննող հայացքից թաքցնեն երկրի քաղաքական բանտարկյալներին, ԼՂՀ-ն որակեցին որպես «ահաբեկչական դրախտ»՝ հայցելով ամերիկյան աջակցություն ընդդեմ հայկական իրեդենտիզմի[1][54]:

Սական նրանք միակը չէին, քանի որ կովկասյան հակամարտող կողմերը սկսեցին իրենց հակառակորդներին որակել ժամանակին համահունչ «ահաբեկիչ» տերմինով՝ հուսալով, որ կստանան Միացյալ Նահանգների աջակցությունը: Վրացի պաշտոնյաներն անջատված Աբխազիայի Հանրապետությունը բնորոշեցին որպես «դավաճան

[1] Իրեդենտիզմը XIX դարի վերջին-XX դարի սկզբին Իտալիայում ծավալված քաղաքական-հասարակական շարժում էր, որը պայքարում էր իտալացիներով բնակեցված Ավստրո-Հունգարիայի սահմանամերձ շրջանները Իտալիային վերամիավորելու համար (Մ.Ե.):

ահաբեկչական կազմավորում», իսկ Ռուսաստանը չեչեն ապստամբներին անվանեց «իսլամական ահաբեկիչներ» և այլն: Չնայած Ադրբեջանը դասվել է երրորդ աշխարհի երկրների շարքին, ադրբեջանցիները գիտակցում են, որ նրանք որոշ չափով տարբերվում են հետադիմական մյուս հասարակություններից և շատ անսպասելի խոչընդոտներ են ստեղծում ԱՄՆ քաղաքական և տնտեսական ռազմավարության համար:

Հոգեբանական ամենահիմնական խնդիրը, որին առաջիկա տարիներին մենք ականատես կլինենք Ադրբեջանում, այն է, որ պայմանավորված սոցիալիստական ժառանգությամբ՝ բնակչության մեծ մասը լավ կրթություն է ստացել և վարել բարեկեցիկ կյանք: Այնքան էլ հեշտ չէ նրանց համոզել «ազատ հասարակության» և արտաքին ներդրումների առավելության մասին: Հասարակության մեծ մասը՝ միլիոնավոր մարդիկ, որոնք չեն աշխատում նավթարդյունաբերության ոլորտում, չգիտեն անգլերեն կամ չունեն Արևմուտքից եկած մարդկանց սպասարկող խանութներում աշխատելու համար անհրաժեշտ երիտասարդություն ու բարետես արտաքին, չի կարող ներգրավվել արտաքին ներդրումներով ու միջազգային չափանիշներով շարժվող տնտեսության մեջ:

Ադրբեջանում Միացյալ Նահանգների իրատեսական քաղաքականության երկրորդ խոչընդոտը հավասարության և սոցիալական արդարության ձգտող կովկասյան ոգին է: Հավասարության զգացումը կովկասյան յուրաքանչյուր ազգի արյան մեջ է և խոչընդոտում է կապիտալիստական արժեքների արմատավորմանը: Ի տարբերություն հարևան մեծ երկրների, կովկասյան ոչ մի ժողովուրդ երկար ժամանակով չի հանդուրժի բռնակալական որևիցե դրսևորում, հատուկ արտոնություններ և սոցիալական խիստ անհավասարության մթնոլորտ:

Եթե ադրբեջանական միջին ընտանիքում տնտեսական որևիցե առաջընթաց չնկատվի, ապա Արևմուտքի և ԱՄՀ-ի կողմից պարտադրված «կայունության» և «անցումայնության» դրույթներն աստիճանաբար կմերժվեն և ժողովրդական արմատական ընդվզումները կուղղվեն նավթային կոնցեսիաների՝ որպես անհավասարության, կոռուպցիայի, հիասթափության և ազգային ստորացման լուռ խորհրդանիշերի, դեմ: Վաշինգտոնը բավական մեծ փորձ ունի Ֆուլգենցիո Բատիստայի, Իրանի շահի նման ուժեղ անհատականությունների հետ աշխատելու ոլորտում, սակայն հենց նույն պատմական փորձը ցույց է տալիս, որ ինչ էլ լինի կոնկրետ նավթային ընկերությունների կամ ամերիկյան դիվանագիտության կարճաժամկետ շահը, դրան հետևում է հասարակության բացասական արձագանքը, ինչպես դա տեղի ունեցավ Կուբայում և Իրանում:

Ադրբեջանը չի կարող չընկալել պատմության այս սոցիալական օրենը: Մենք նաև պետք է հաշվի առնենք տարածաշրջանի տերերին ադրբեջանցի սատրապների ցուցադրական հավատարմության երկար պատմությունը: Հաշվի առնելով նրանց դավաճան անցյալը՝ հարց է ծագում, թե վաղը Բաքվի մեր նոր «ընկերները» ինչքանով վստահելի կլինեն՝ Ռուսաստանի կայսերապաշտական նկրտումների վերածննդին և Կենտրոնական Ասիայում իսլամական արմատականության աճին զուգընթաց:

Մեր քաղաքական նախագծողներին Ադրբեջանը ներկայանում է որպես շատ դժվարին կացության մեջ գտնվող երկիր՝ հետևելով Մերձավոր Արևելքում կորսված մյուս վտարանդի *(outcast, ռուս.՝ изгой, страна изгой- Մ.Ե.)* երկրների օրինակին: Մենք կրկին և կրկին նրանց տված դասերից պետք է սովորենք, որ կոռուպցիայի մեջ խրված երկրները (անկախ նրանից, թե այժմ որքան հավատարիմ են մեզ) չեն կարող հանդիսանալ կայուն ժողովրդավարության և ազատ զարգացման (չհաշված ԱՄՆ երկարաժամկետ ազգային շահերը) գրավական: Նավթային եկամուտներից մի մեծ հարստություն կուտակելով՝ մեր հզոր «լավագույն ընկերներն» ապահով փախչում են քաղաքակիրթ և անվտանգ Եվրոպա՝ քեռի Սեմին մեղավոր թողնելով այդ երկրների սպանդանոցներում:

Օգտագործված գրականության և աղբյուրների ցանկ

1. Monitor վերլուծական ամսագիր, Բաքու, մարտ, 2002թ., էջ 8:
2. Azerbaycan, Բաքու, հոկտեմբերի 18, 2002թ.:
3. The Transition Report, London-EBRD (Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ), November, 2001., p. 36:
4. Social Assessments for Better Development: Case Studies from Albania, Azerbaijan and Moldova, Washington, World Bank, 2002, p. 36:
5. United Nations Development Program, Human Development Under Transition: Annual National Reports, New York, United Nations, 2001, p 87:
6. Yeni Musavat, Բաքու, հունվարի 11, 2002թ.:
7. Azerbaijan, վերլուծական-տեղեկատվական շաբաթական տեղեկագիր, Բաքու, # 23, հունիսի 6, 2002թ.:
8. 1996-1998թթ. մոլախաղերում Իլհամ Ալիևը տանուլ է տվել $6 մլն, Turkish Daily News, Անկարա, օգոստոսի 25, 1999թ.:
9. Независимая газета, Մոսկվա, դեկտեմբերի 1, 1999թ.:
10. Այս թիվը հավասար է 2000թ. Ֆրանսիա արտագնա աշխատանքի մեկնած մարոկոցիների կողմից իրենց հայրենիք ուղարկված գումարին, ինչն էլ հետագայում պատճառ հանդիսա-

ցավ Ադրբեջանը որպես երրորդ աշխարհի երկիր բնորոշելու համար: The Economist, Լոնդոն, նոյեմբերի 2, 2002թ. էջ 11:

11. Հեղինակի հարցազրույցը Բաքվում գտնվող Գիտությունների ազգային ակադեմիայում, հունվար, 2002թ.:
12. Օրինակ, ՄԱԿ-ի փախստականների գծով բարձրագույն հանձնաժողովը դադարեցրել է գործունեությունն Ադրբեջանում, քանի որ չեչեն փախստականները բողոքել են, թե այդ գործով զբաղվող տեղի պաշտոնյաները հումանիտար օգնության և նպաստի բաժանման համար կաշառք են պահանջում: RFE/RL Newsline, մարտի 28, 2002թ., www.rferl.org/newsline :
13. Իրականում ոչ մի փաստացի ապացույց չկա, սակայն պաշտոնանկ արված բազմաթիվ նախկին պաշտոնյաներ նկարագրել են ինձ այդ գործընթացը: Իմ ազգականներից մեկը, որը սահմանապահ բարձրաստիճան սպա էր, սպանվեց մայրուղու վրա տեղի ունեցած «ճանապարհատրանսպորտային պատահարի» հետևանքով, այն բանից հետո, երբ հրաժարվեց կիսվել վերադասներին հետ:
14. Jeffrey Goldberg, Getting Crude in Baku, The New York Times Magazine, հոկտեմբերի 4, 1998թ., էջ 69:
15. Կարդացեք ընդամենը մի քանի հոդված Բաքվի թերթերում. Adalet, դեկտեմբերի 4, 2001թ., Azadliq, հունվարի 15, 2002թ., Exo, սեպտեմբերի 18, 2002թ., Muxalifet, նոյեմբերի 19, 2002թ.:
16. Այս և կառավարական այլ մակարդակներում գոյություն ունեցող կոռուպցիայի վերաբերյալ ազգային անվտանգության նախարարության հետաքննությունների ընթացքում հավաքված փաստացի ապացույցները Виртуальный монитор ինտերնետային էջում որպես խոստովանություն ներկայացրել է նախարարության փախստական սպա Ռամին Նազիևը (http://www.virtualmonitor.org):
17. Г. Ибадов, Азербайджан и Россия: общества и государства, Մոսկվա, 2001թ., էջ 81-82:
18. The Financial Times, նոյեմբերի 22, 2001թ.:
19. 2002 Corruption Perceptions Index (http://www.transparency.de), Control Risks Group's Global Corruption Survey 2002 (http://www.crg.com):
20. 2000թ. օգոստոսի 26-ին Бакинский рабочий թերթում տպագրված կառավարական հետաքննության զեկույցը պնդում էր, որ պրն Գուլիևը նախագահ Ալիևի քաղաքական ընդդիմախոսը չէ, այլ մի դատապարտված հանցագործ, ով թալանել է իր սեփական երկիրը և ֆինանսավորում է իր ընդդիմադիր գործունեությունը: Միաժամանակ զեկույցը հանդիմանում էր «այն երկրների կառավարություններին, որոնք քննադատում են Ադրբեջանում տիրող կոռուպցիայի մթնոլորտը, սակայն հակառակ բազմաթիվ խնդրանքների՝ հրաժարվում են նրան *(Ռասուլ Գուլիևին - Մ.Ե.)* իրենց *(պաշտոնական Բաքվին - Մ.Ե.)* հանձնել»:
21. Cumhuriyet, Ստամբուլ, հուլիսի 1, 1993թ.:

22. Н. И. Рыжков, Перестройка: история предательств, Մոսկվա, 1992թ., էջ 204-208: Е. К. Лигачев, Как это было, Նովոսիբիրսկ, 1995թ., էջ 183-184:
23. Մեջբերված է ИТАР-ТАСС-ից, ապրիլի 12, 2002թ. (http://www.itar-tass.com/news.asp):
24. Claudia Rosett, Potentate Jr.: an Interview with Azerbaijan's Dictator-in-Training, The Wall Street Journal, նոյեմբերի 6, 2002թ.:
25. Տե՛ս պետքարտուղարության Dispatch հանդեսը, հոկտեմբեր, 1996թ., էջ 14, մայիս, 1999թ., էջ 12:
26. United States Energy Information Administration, Caspian Sea Region (http://www.eia.doe/gov).
27. Owen Matthews, The Next Move is Check, Newsweek, ապրիլի 8, 2002թ., էջ 44-45:
28. The Financial Times, ապրիլի 9, 2002թ.:
29. Ադրբեջանի և նախահեղափոխական *(1979թ. իսլամական հեղափոխությունը - Մ. Ե.)* Իրանի միջև նմանությունները (ինչը ցույց է տալիս, թե Ադրբեջանն ինչ ճշգրտությամբ է հետևում իր մեծ հարևանների ուղուն) տե՛ս իմ The Next Iran հոդվածում, The Washington Post, սեպտեմբերի 28, 1998թ.:
30. Turan Information Agency, Բաքու, հունիսի 5, 2002թ. (http://www.turaninfo.com):
31. Agence France-Presse, հոկտեմբերի 22, 2002թ. (http://www.afp.com):
32. The Economist, Լոնդոն, հոկտեմբերի 26, 2002թ., էջ 47:
33. Turkish Daily News, Անկարա, նոյեմբերի 23, 2001թ.:
34. Л. Агаев, И. Велиев, Контракты века и проблемы нефтедобычи на Каспии, Բաքու, 1997թ., էջ 83-114:
35. Oil and Gas Journal, Հյուսթոն, հոկտեմբերի 24, 2001թ., էջ 34:
36. The Economist, Լոնդոն, սեպտեմբերի 14, 2002թ., էջ 26:
37. The Washington Post, նոյեմբերի 22, 2002թ.:
38. Stanley Kober, The Great Game, Round 2: Washington's Misguided Support for the Baku-Ceyhan Oil Pipeline, Cato Institute Publication № 63 Վաշինգտոն, 2000թ., էջ 14: An Agenda for Renewal: US-Russian Relations, Russian and Eurasian Program of the Carnegie Endowment for International Peace-ի կոմից պատրաստված զեկույց, Վաշինգտոն, 2000թ., էջ 28:
39. Зеркало, Բաքու, դեկտեմբերի 14, 2002թ.:
40. Fortune, The Incredible Half-Billion-Dollar Azerbaijani Oil Swindle, Նյու Յորք, մարտի 6, 2000թ., էջ 78-85:
41. Yeni Musavat, Բաքու, հոկտեմբերի 29, 2002թ.:
42. Le Monde, Փարիզ, փետրվարի 6, 2001թ.:
43. Seymour Hersh, The Price of Oil: What was Mobil up in Kazakhstan and Russia?, The New Yorker, հուլիսի 9, 2001թ., էջ 48-65:
44. A. Kusainov, Kazakhstan Prime Minister Admits to Existence of Secret Government Fund, Eurasia Insight, ապրիլի 5, 2002թ. (http://www.eurasianet.org/departments/insight):
45. The Wall Street Journal, հունվարի 4, 2002թ.:

46. Կառավարության բարձրաստիճան նախկին պաշտոնյաներ, ներառյալ՝ Լլոյդ Բենսթենը (Lloyd Bensten), Ջեյմս Բեյքերը (James Baker), Ջոն Սունունուն (John Sununu), Բրենթ Սքոուքրովթը (Brent Scowcroft), Զբիգնև Բժեզինսկին (Zbigniew Brzezinski), Ռիչարդ Արմիթեյջը (Richard Armitage, որն այժմ պետքարտուղարի տեղակալն է) և այլ հեղինակավոր անձինք, ովքեր ղեկավարում են ամերիկա-ադրբեջանական լոբբիստական խմբերը, դրամական աջակցություն են ստանում նավթային ընկերություններից: Տե՛ս The Washington Post, հուլիսի 6, 1997թ.:
47. Մեջբերված է իմ անանուն գրախոսների մեկնաբանություններից:
48. Որպես պատմական օրինակ՝ ընթերցողի ուշադրությունն եմ հրավիրում Անատոլ Լիվենի (Anatole Lieven) The (not so) Great Game հոդվածը, The National Interest, Վաշինգտոն, ձմեռ 1999թ./2000թ., էջ 69-80:
49. Azerbaycan, Բաքու, փետրվարի 21, 2001թ.:
50. 2001թ. ապրիլի 3-ին The Los Angeles Times-ին տված հարցազրույցում ԼՂՀ նախագահ Արկադի Ղուկասյանն ասաց, որ ինքը չի համաձայնվի կարգավորման այն տարբերակին, ըստ որի Ադրբեջանի հետ պետք է ստեղծվի համադաշնություն, և բոլոր այլ տարբերակները, որոնք չեն ներառում անկախությունը կամ վերամիավորումը Հայաստանի հետ, կմերժվեն Ստեփանակերտի կողմից և, հնարավոր է, հանգեցնեն պատերազմի:
51. OSCE Newsletter, Վիեննա, մայիս, 2001թ. էջ 8:
52. Որպես օրինակ տե՛ս Թոմաս Գոլցի (Thomas Goltz) Azerbaijan Diary-ին, Armonk հրատարակչություն, Նյու Յորք, 1998թ.: Նույն Թոմաս Գոլցի Letter from Baku հոդվածը The National Interest-ում (Վաշինգտոն, ամառ, 1997թ., էջ 37-45), ինչպես նաև նմանատիպ այլ պատմություններ Կալիֆորնիայում հրատարակվող Azerbaijan International-ի գրեթե ամեն համարում:
53. Հոդվածի մեջ նշված է. «Համաձայն այս կամ մեկ այլ ուրիշ ակտի *(«Անկախության աջակցման ակտի» - Մ.Ե.)*, Միացյալ Նահանգները չի կարող օգնություն ցույց տալ Ադրբեջանի կառավարությանը, մինչև նախագահը *(ԱՄՆ նախագահը- Մ. Ե.)* կորոշի, ուստիև Կոնգրեսին կզեկուցի, որ Ադրբեջանի կառավարությունը ցուցադրական քայլեր է ձեռնարկում դադարեցնելու Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակումն ու նրանց դեմ ուժի ագրեսիվ կիրառումը»:
54. Տե՛ս Բաքվում լույս տեսնող մի շարք պարբերականներ: Օրինակ, Xalq, սեպտեմբերի 27, 2001թ., Azadliq, հոկտեմբերի 11, 2001թ., Ulus, հոկտեմբերի 23, 2001թ.:

թարգմանությունը՝
Մաղլեն Եղիկյանի